№ 102 ՈՒՐԲԱԹ, 15 ՄԱՅԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

ՈՒՐԲԱԹ, 15 ՄԱՅԻՍԻ № 102

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանրվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված գօկումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամ Մովսէսեան և իր զաւակները՝ Սարգիս, Ռուբէն, Փեփրոնիա, Հռիփսիմէ և Հեղինէ ՍԱԿԱՅԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, իսկ միւսներն իրանց սիրելի հօր՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտ. ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլոլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

Խնդրում ենք պսակներ չը դնել։ 316. 1—1

Մարգարիտ և Արշակ ՄԵԼԻՔ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր անմոռանալի հօր, իսկ երկրորդն իր սիրելի անուանից՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլոլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

Խնդրում ենք պսակներ չը դնել։ 317. 1—1

Գերապիտ Առաքելեան Մելիք-Գրիգորեանցը, ընկերները և բարեկամները սրտի անոյշ կսկիծով յայտնում են

Բարսեղ Յարութիւնեան ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (ԿԱՐԱ-ՄԵԼԻՔ)

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 6-ին, երկարատև և տանջալից հիւանդութիւնից յետոյ։ Կարքը կը կատարվի Խօջիվանքի եկեղեցում այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին։ Թաղումը նոյն Խօջիվանքի գերեզմանատունը։

314. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Մասնակցութեամբ տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
Կը ներկայացնէ

Շաբաթ, մայիսի 20-ին Շէքսպիրի **ՀԱՄԼԷՏ**

Հինգշաբթի, մայիսի 21-ին Շանթի **ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ**

Ուրբաթ, մայիսի 22-ին **ՄԷԴԷԱ**

Պատրաստվում են յատուկ զգեստներ և դեկորացիաներ առաջին անգամ հայ բեմի վրա ներկայացնելու Շէքսպիրի Դանէմի, արաբների կեանքից՝ **„ԱՆԹԱՐ"** պիէսը, որ ընդարձակ թարգմանել է պ. Վրթանէս Փափազեանը։

Կիրակի, մայիսի 24-ին վերջին ներկայացումն է։ Կը ներկայացվի ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ **„ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ"** ներկայացումներին կը մասնակցեն՝ (այբուբենական կարգով) տ. տ. Աշխէն, Զարէլ, Մանուչարեան, Մայսուրեան, Ցատիկ, ՍԻՐԱՆՈՅՇ, Սեւումեան, պ. պ. Ալիխանեան Խ., Ազեան, Ալլահվերդեան, Բաբեան, Գրիգ-Ֆիգարեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Մելքոնեան, Խորէն, Փափազեան, Սեւումեան և ուրիշներ։

Տեղերի գները սովորական են։ —◆o◆— Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։

Յայտարարված ներկայացումների տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում։

Ցուշարար՝ ԶԱՐԶԱՐԵԱՆ (ա. օ.) առ. Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

304. 4—2

Կիրակի, մայիսի 17-ին 1915 թ.

ԲԺ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՅԳՈՒՄ, Մելքայէլեան փողոց № 65.

ՅՕԳՈՒՏ ԷԶՄԻԱԾՆԵՑՈՑ «ՄԱՐԻԱՄԵԱՆ» ՕՐԻՈՐԴԱՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տեղի կունենայ

ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Հեռաքրքրական ծրագրով։

Ցերեկով ՄԱՆԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ դերասանների մասնակցութեամբ, ձիարշաւ, օղակախաղ, աշտարակ, նշանառութիւն, շքեղ բուֆէտ զովարար խմիչքով, ծաղիկներ, կոմֆէտներ, եւրոպական նուագախումբ, զուգուկ, **ՊԱՐԵՐ։**

ՋԱՒԷՇՏ Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆԻ մասնակցութեամբ։

Սկիզբը առաւօտեան ժամը 11-ին։

Մուտքը մեծերի համար 25 կոպէկ, իսկ փոքրերին՝ 15 կոպէկ.

առ. (կ.) 318. 2—1

Վանի եւ Վասպուրականի Հայրենակցական Միութիւնը

հրաւիրում է իր հայրենակիցներին կիրակի, մայիսի 17-ին, ժամը 11—12-ին Վանքի մայր եկեղեցին, օրտեղ կատարվելու է հանդիսաւոր զոհաբանական մաղթանք ռուսական զաւտարար բանակի, հայ կամաւորների հետ, Վասպուրականը և Վանը գրաւելու առիթով, հանդէս և հոգեհանգիստ՝ նահատակների յիշատակին։

Մաղթանքից յետոյ, Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութիւնը հրաւիրում է Թիֆլիսաբնակ վանեցիներին և վասպուրականցիներին ժողովի, որ տեղի է ունենալու Բարեգործ. Ընկ. դպրոցում (Արաս-Աբաղեան հրապ. № 7) ցերեկվայ ժամը 1-ին՝ քննելու և վճռելու հայրենիքի [illegible] հարաբերութեամբ օգնելու վերաբերեալ խնդիրները։

ա. (ա. օ.) 315. 3—1

Հայկական Կենտրոնական Կոմիտէն եւ Կովկասի Հ. Բարեգ. Ընկ. Խորհուրդը

հասատ և ստոյգ աղբիւրներից տեղեկանալով, որ Վան քաղաքում ապաստանած հարիւր հազարաւոր տառապեալներ ենթակայ են ծայրայեղ զրկանքի և անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն, որոշել է անմիջապէս ուղարկել նրանց համար դրամ, իրեր և սանիտարական-բժշկական խումբ դեղօրայքով։

Տագնապալից դրութիւնը ի նկատի ունենալով՝ սրանով դիմում է հայ հասարակութեան զգացմունքին և խնդրում, այս պատմական րոպէին, չը խնայել իր առատաձեռն նուէրները թէ իրերով և թէ դրամով, որոնք կընդունվեն անհուն շնորհակալութեամբ։

Նուէրները ուղղել՝ Արաս-Աբաղեան հրապ. № 7. (կ.) առ. 313. 2—1

ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԵՐԸ

Հայ հասարակութիւնը գիտակ եղաւ «Մշակի» մէջ տպված հեռագիրներից, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմել էր Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի և Միացեալ-Պետութիւնների կառավարութիւններին և, յայտնելով Հայաստանում տեղի ունեցած կոտորածների և ջարդերի մասին, խնդրել էր միջամտութիւն և պաշտպանութիւն։

Անշուշտ, այդ դիմումի անմիջական հետեւանք պէտք է համարել այն առաջադրութիւնը, որ, ինչպէս երէկ պաշտօնապէս յայտարարեց Հեռագրական Գործակալութիւնը, դաշնակից պետութիւնների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարութիւնները արել են Թուրքական կառավարութեան, թէ նրանք Հայաստանում կատարված ոճիրների ամբողջ պատասխանատուութիւնը ձգում են Թուրքիայի կառավարութեան բոլոր անդամների վրա և նրա տեղական իշխանութիւնների այն ներկայացուցիչների վրա, որոնք մեղսակից կը լինեն կոտորածին։

Այն օրից, երբ ծագել է հայկական հարցը, առաջին անգամն է, որ եւրոպական մեծ պետութիւնները այդպիսի կարուկ, վճռական լեզուով խօսում են Թուրքաց կառավարութեան հետ և դրանով հայկական հարցի միջազգայնութիւնը շեշտում, բացի բուն մարդասիրական, քրիստոնէական տեսակէտը, որ չը պէտք է թոյլ տայ ջնջումը քաղաքակրթական յատկութիւններով օժտված մի պատմական ժողովրդի։

Տասնեակ, հարիւր տարիներ Թուրքական իշխանութիւնը կոտորում, բռնաբարում է իր լծի տակ հեծեծող քրիստոնեայ ժողովուրդները և ճնում է անպատիժ։ Այսօր հասել է ժամը սոսկալի պատժի, և երեք դաշնակից պետութիւնների ազդարարութիւնը՝ այդ պատժի անհրաժեշտութիւնն է շեշտում։

Ոճրագործութիւնը պէտք է կրէ իր արժանաւոր պատիժը։

Հ. Առաքելեան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԶԳԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Մեծ ազէտների ժամանակ երևան են գալիս և մեծ յատկանիշները, մեծ առաքինութիւնները, ինչպէս և մեծ թերութիւնները, որևէ մի ազգի դրական և բացասական կողմերը։

Մեծութեան և վեհութեան նշանաւոր յատկութիւններ և առաքինական սիրագործութիւններ երևան հանեցին ֆրանսիական և անգլիական ազգերը։ Խաղաղ և սովորական ժամանակ կուսակցական պայքարները, կրքերը գործում էին ամենամեծ թափով և եռանդով, բայց երբ հրատարակվեց պատերազմ, երբ ընդհանուր հայրենիքը վտանգի ենթարկվեց և պէտք էր մտածել միայն նրա փրկութեան և փառքի համար, բոլոր կուսակցութիւնները, մինչ այդ իրար դէմ կատաղի կռիւ և հալածանք մղող կուսակցութիւնները, միացած ի մի սիրտ և հոգի, կանգնեցին իրար կողքի և կազմեցին ընդհանուր կօալիցիօնական կառավարութիւն, բաղկացած բոլոր քաղաքական հոսանքների և ուղղութիւնների ներկայացուցիչներից։

Նոյնպիսի մեծ հայրենասիրութեան մի նոր արտայայտութիւն երևան եկաւ նորերս Անգլիայում։ Այդտեղ, ինչպէս գիտենք, քաղաքական աշխարհում երկու մեծ և զօրեղ կուսակցութիւն կայ—տօրիների և վիգերի կամ ազատամիտների և պահպանողականների։ Երկուսն ևս ամենամեծ ծառայութիւններ են մատուցել իրանց հայրենիքին. երկուսն ևս ամենամեծ հայրենասէրներ են տուել իրանց ազգին. երկուսն ևս նպաստել են մեծն Բրիտանիայի հզօրութեան և բարգաւաճման։ Երկուսն ևս յաջորդաբար վարում են երկրի կառավարութիւնը, երբ ազգի կամքը կանչում է և կառավարութեան ղեկը յանձնում նրանց։ Վերջին 9 տարին երկրի կառավարութեան ղեկը գտնվում է ազատամիտների ձեռքում, առաջնորդութեամբ Ասկվիտի և Գրէյի։ Երբ պատերազմը ծագեց, անմիջապէս հրատարակվեց կուսակցական զինադադարի սկզբունքը, որ ամբողջ երկիրն ընդունեց։ Սակայն Ասկվիթ-Գրէյի կաբինէտը դրանով չը բաւականացաւ. մայիսի 6-ին այդ կաբինէտը հրաժարական տուեց և Ասկվիթը յայտարարեց պարլամենտում, թէ «կառավարութիւնը ի նկատի ունի միջոցներ ձեռք առնել կազմելու համար մի կաբինետ աւելի լայն հիմունքով թէ քաղաքական և թէ անձնական կազմի տեսակէտից»։ Այսինքն, ազատամիտ մինիստրութիւնը կամենում է կազմել մի կաբինէտ ազատամիտ-պահպանողական կազմով, կամ մի կօալիցիօնական մինիստրութիւն, որպէսզի պատերազմի սկզբին տեսանապէս յայտարարված ազգային ընդհանուր միութեան լօզունգը իրագործվի և գործնականապէս։

Ուրեմն Անգլիայի ազատամիտները իրանց վերջին տարիների յամառ և տոկուն կուսակցական պայքարի բոլոր արդիւնքը զոհեցին ազգային միութեան սկզբունքին, որպէսզի այն ժամին, երբ հայրենիքը վտանգի է ենթարկված կամ հայրենիքի պատիւը և ապագան է շօշափված, ամբողջ ազգը մի սիրտ և մի հոգի լինի։

Ահա այդտեղ է երևում ազգի մեծութիւնը և վեհութիւնը, երբ այն անձինք, որոնց ձեռքումն էր գտնվում բաղդի և իրերի բերմամբ երկրի ղեկը և կառավարութիւնը, զոհում են իրանց կուսակցական շահերը, նկատումները և ձեռք մեկնում իրանց հակառակորդներին յանուն հայրենիքի։

Երանի թէ կարողանայինք մենք հայերս ամենափոքր օրինակը վերցնել անգլիացիներից։ Ազգային մեծ աղէտի առաջ կարողացանք մենք գլուխ բերել ընդհանուր միութիւն և համագործակցութիւն. ցաւով պէտք է արձանագրել, որ ոչ, չը կարողացանք, որովհետև փոքրագի ազգ լինելով, մենք չը կարողացանք մեր կուսակցական շահերը զոհել ընդհանուր ազգային շահերին և գլուխ բերել ազգային ընդհանուր միութեան գործը։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 մայիսի

ԱԹԷՆՔ.—Այն սուզանաւը, որ ուրբաթ օրն անցաւ Նեղուցով և մտաւ Մարմարա ծովը, ոչ թէ ֆրանսիական էր, այլ անգլիական։ Նա ջրասուզել է 2 թիւրքական հակառականաւ և 6 ուրիշ նաւ, որոնց վրա կար ռազմամթերք։

Դաշնակից զօրքերը մօտենում են Նաղարային։

Ստացված տեղեկութիւնների համաձայն նեղուցի ասիական ափում դրված մարտկոցները շարունակում են արգելք լինել դաշնակից նաւատորմի գործողութիւններին։

Կռիւները շարունակվում են դաշնակիցների համար նպաստաւոր պայմաններում։ Դարդանել քաղաքը հրդեհված է։ Դաշնակից զօրքերը շարունակում են ափ իջնել։

ԼՕՆԴՕՆ.— Հաղորդագրութիւն Դարդանելում կատարվող ռազմական գործողութիւնների ընթացքի մասին։

Մայիսի 8-ին ֆրանսիական դիվիզիան բաւականին առաջացաւ և ներկայումս գտնվում է թիւրքական խրամատներին մօտիկ տարածութեան վրա։

Մայիսի 9-ին թշնամին շեշտակի յարձակում գործեց հնդիկ զօրքերի ձախ զօրաթևի դէմ. թշնամուն աջողվեց կարճ ժամանակով գրաւել մեր դիրքերը։ Սակայն մեր ուժեղ հակայարձակումից թիւրքերը շուտով ցիրուցան եղան, կորցնելով 500 մարդ սպանված և տալով մեծ թւով գերիներ։

Մայիսի 10-ին թիւրքերը խնդրեցին զինադադար կայացնել իրանց մեռած քանակութեամբ սպանվածներին թաղելու համար, որոնք ընկած էին մեր խրամատների առաջ։ Այդ խնդրին բաւարարութիւն տրվեց։ Թիւրքերը թաղեցին աւելի քան 3000 դիակ, որոնք սպանվել էին մայիսի 5—7 ժամանակամիջոցում։

Մայիսի 11-ի օրը հարաւային շրջանում անցաւ միանգամայն հանգիստ։ Ֆրանսիացիք անգլիական ծովային դիվիզիայի հետ միասին բաւականին առաջացել են գիշերով՝ կրելով անհնարին կորուստներ։ Տէրիտորիալ դիվիզիան նոյնպէս առաջացել է։ Նոր դիրքերը մենք ամրացրել ենք։

ՎԱՆԻ ԳՐԱՒՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Մեսրոպ եպիսկոպոսի խփած հեռագրին ի պատասխան, մայիսի 14-ին ստացվել է փոխարքայից հետեւեալ հեռագիրը.

Ցայտնում եմ ձերդ սրբազնութեան իմ խորին շնորհակալութիւնը Վան քաղաքը մեր քաջարի զօրքերի ձեռքով վերցվելու առիթով կատարված աղօթքների և բարի ցանկութիւնների համար։

Գեներալ-ադիւտանտ
կոմս ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ

ՎԱՆԵՑԻՆԵՐԻ ԱՂԵՐՍԸ

Էջմիածին հասած մի յատուկ սուրհանդակ մայիսի 6-ին Լիմ անապատից հետեւեալ գրութիւնն է բերել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հասցէագրված։ Գրութիւնը թւագրված է ապրիլի 14-ից.

* * *

Գթառատ և Վեհափառ Տէր.

Զայն զուժի՝, ձայն ողբի և աղաղակի՝. տարաբաղդ որդիքդ Ազգանազեան զարմի ամէնքը մէկ հարուածով յարմատէ կոտորեցան. աւերակ ամայացեալ անապատացեալ երկիր կուլայ և կը խնդէ իր կորսուած որդիները ու չի կրնար գտնել, զի այլ ևս չկան։

Հինգ տարեկան մանուկէն մինչև հարիւրամեայ ծերունին սրախողխող եղան, հարսունք և կուսանք միահամուռ գերուեցան, գիւղ և դաշտ, լեռ ու ձորը, նկուղ ու հորը լիքն են հայոց դիակներով, գայլեր ու գազաններ յագեցան՝ գոհացան հայոց արիւնով, գետեր և աղբիւրները կարմիր փոխուած են, սակայն տակաւին մարդ գտ-

Մարիամ Մովսէսեան և իր զաւակները՝ Սարգիս, Ռուբէն, Փեփրոնիա, Հռիփսիմէ և Հեղինէ ՍԱԿԱՅԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, իսկ միւսներն իրանց սիրելի հօր՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտ. ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլոլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

Խնդրում ենք պսակներ չը դնել։ 316. 1—1

Մարգարիտ և Արշակ ՄԵԼԻՔ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր անմոռանալի հօր, իսկ երկրորդն իր սիրելի անուանից՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլոլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

Խնդրում ենք պսակներ չը դնել։ 317. 1—1

Գերապիտ Առաքելեան Մելիք-Գրիգորեանցը, ընկերները և բարեկամները սրտի անոյշ կսկիծով յայտնում են

Բարսեղ Յարութիւնեան ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (ԿԱՐԱ-ՄԵԼԻՔ)

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 6-ին, երկարատև և տանջալից հիւանդութիւնից յետոյ։ Կարքը կը կատարվի Խօջիվանքի եկեղեցում այսօր, ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին։ Թաղումը նոյն Խօջիվանքի գերեզմանատունը։

314. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Մասնակցութեամբ տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
Կը ներկայացնէ

Շաբաթ, մայիսի 20-ին Շէքսպիրի **ՀԱՄԼԷՏ**

Հինգշաբթի, մայիսի 21-ին Շանթի **ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ**

Ուրբաթ, մայիսի 22-ին **ՄԷԴԷԱ**

Պատրաստվում են յատուկ զգեստներ և դեկորացիաներ առաջին անգամ հայ բեմի վրա ներկայացնելու Շէքսպիրի Դանէմի, արաբների կեանքից՝ **„ԱՆԹԱՐ"** պիէսը, որ ընդարձակ թարգմանել է պ. Վրթանէս Փափազեանը։

Կիրակի, մայիսի 24-ին վերջին ներկայացումն է։ Կը ներկայացվի ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ **„ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ"** ներկայացումներին կը մասնակցեն՝ (այբուբենական կարգով) տ. տ. Աշխէն, Զարէլ, Մանուչարեան, Մայսուրեան, Ցատիկ, ՍԻՐԱՆՈՅՇ, Սեւումեան, պ. պ. Ալիխանեան Խ., Ազեան, Ալլահվերդեան, Բաբեան, Գրիգ-Ֆիգարեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Մելքոնեան, Խորէն, Փափազեան, Սեւումեան և ուրիշներ։

Տեղերի գները սովորական են։ —◆o◆— Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։

Յայտարարված ներկայացումների տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում։

Ցուշարար՝ ԶԱՐԶԱՐԵԱՆ (ա. օ.) առ. Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

304. 4—2

Կիրակի, մայիսի 17-ին 1915 թ.

ԲԺ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՅԳՈՒՄ, Մելքայէլեան փողոց № 65.

ՅՕԳՈՒՏ ԷԶՄԻԱԾՆԵՑՈՑ «ՄԱՐԻԱՄԵԱՆ» ՕՐԻՈՐԴԱՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տեղի կունենայ

ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Հեռաքրքրական ծրագրով։

Ցերեկով ՄԱՆԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ դերասանների մասնակցութեամբ, ձիարշաւ, օղակախաղ, աշտարակ, նշանառութիւն, շքեղ բուֆէտ զովարար խմիչքով, ծաղիկներ, կոմֆէտներ, եւրոպական նուագախումբ, զուգուկ, **ՊԱՐԵՐ։**

ՋԱՒԷՇՏ Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆԻ մասնակցութեամբ։

Սկիզբը առաւօտեան ժամը 11-ին։

Մուտքը մեծերի համար 25 կոպէկ, իսկ փոքրերին՝ 15 կոպէկ.

առ. (կ.) 318. 2—1

զան Թիւրք կառավարութիւնը չի գոհանար, չի յագենար, դեռ կը փնտռէ՝ դեռ կորսնէ՝ նկուղներէն՝ ձոր ու փոսերէն աղուէսներու պէս դուրս կը հանէ ու կը խողխողէ։

Վասպուրականը որպէս ապատամբ և հակառակ ներկայացուցուած է Թիւրք կեդրոնական կառավարութեան, և արքայավաւեր հրովարտակով ազատ ու համարձակ սկսեալ ապրիլ 6-ին մինչ ապրիլ 14-ը, այս տողեր գրուած րոպէին, տակաւին կը կոտորուին անմեղ հայեր, և քար ու հողը կը ներկուի հայու անմեղ արիւնով։

Միմիայն մօտ 3000 երիտասարդներով և նոյն թուով կոյսերով և հարսներով պատուած ծարաւած կամք Լիմ Անապատի կղզիի մէջ՝ համբերով օրհասականիս։

Ոչ մի կողմէ օգնութիւն, ոչ մի կողմէ փրկութիւն Աստուծմէ ի զատ. ի սէր Աստուծոյ, Հայր, Հայր, ողորմէ մեզ, անմիջական և երագահաս ըրէ օգնութեան ձեռքը և փրկութեան ժամը։

Եթէ երեք օր ալ ուշանայ, զուցէ ալ ոչ ոք մնայ, բացի կոճէյեալ հայ գաւառներէն։

Ա՜հ, սա փոքր և մէջը պարապ մի ծառ էր, ինչու ռուսական մի թեթեւ հովը ալ այնքան ուշացաւ։

Սահմանները պարապ են, ուժը չկայ Վանի մէջ. եթէ ռուս կառավարութիւնը զբաղած է, դէթ երկու կամ երեք հազար մեր համարիւն եղբայրներէն մեզ օգնութիւն փութացնելու շնորը ու գթութիւն թող չգտնայ նոյն քրիստոնէապաշտան հզօր կայսրութիւնն եղկերուներու ոտներով և արծուի թեւերով։

Կը հաւատանք որ Թիւրքը իսպառ պիտի իյնայ Վանի մէջ։ Վանը պարիսպներով ներս հրկեհուած ու կոտորուած է, իսկ Այգեստանը կը լսուի թէ տակաւին կը մնայ դիմադրական, շրջապատուած բոց ու կրակով։

Արդ՝ յոյսերնիս ու սրտերնիս առ Բարձրեալն Աստուած, իսկ աչքերնիս դէպի օգնութեան շաւիղները յառած՝ կը սպասենք կիսամեռ Արդիօք, Աստուած մեր, չենք գիտեր Ձեր օգնութիւն երագահաս պիտի լինի, եթէ ոչ Թիւրք կառավարութեան թընդանօթներ կամ զինուորներով լեցուած նաւերը։

Կղզիաբնակ սևաթաղ և սգաւոր

կրօնականք և աշխարհականք

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՁՕՐԱՇԱԿԱՏՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Դիլմանի մօտ փառաւոր պարտութիւնից յետոյ, Թիւրքերը եռ քաշվեցին դէպի հարաւ-արևմուտք։

«Кавказъ»-ում տպված է այդ կուսում մասնակցողներից մէկի նամակը, որից քաղում ենք հետևեալ հետաքրքրական մասերը։

«Պէտք է ճշմարիտը ասել. թէև Թիւրքերի հրամանատար Խալիլ-բէյը կարող չեղաւ իրագործել Աստուածամնում իր արշաւանքի ծրագիրը, սակայն նահանջը տարաւ օրինակելի կերպով, օրով և փրկեց իր զօրքը վերջնական ջարդից։ Հասկանալով, որ այլևս անհնարին է առաջանալ, Խալիլ-բէյը շրջունակեց մնալ Դիլմանի դիրքերում մինչև գիշեր, իսկ յետոյ, չը դադարեցնելով կրակը, որ տևեց հետևեալ օրն ևս, առաջ շարժեց գլխաւոր այժերը մի քանի վերստ Ուրմիայի և Բաշ-Կալէի կողմը և այնտեղ ամրացաւ լեռներում։

«Թիւրքերը նահանջն սկսեցին երկու ուղղութեամբ. մինը Ուրմիայի ճանապարհով, հէնց Խալիլ-բէյի առաջնորդութեամբ, միւսը —Խանասորի լեռնանցքի կողմով։

«Մեր կողակների հաւաքած տեղեկութիւններից յետոյ, ապրիլի 25-ին հնարաւոր եղաւ դիմել յարձակման Բաշ-Կալէի ուղղութեամբ։

«Ապրիլի 26-ին տեղի ունեցաւ ընդհարում հեծեալ առաջապահ զօրախմբերի միջև, որի հետևանքում Թիւրքերը վանվեցին իրանց լաւ դիրքերից՝ Կ-բա գիւղի մօտ։ Այդ կուի ժամանակ մենք հաւատացանք, որ Թիւրքերը Դիլմանի կուից յետոյ թուլացել են և յոգնել և հաղիւ թէ կարողանան լուրջ դիմադրել մեր արշաւին։ Միակ բանը, որ մեզ երկիւղ էր պատճառում, այն էր, որ մեր ճանապարհը ընկած էր Խանասորի լեռնանցքով, որի անանցանելի լեռները ծածկված էին ձիւնով։ Պէտք էր ամենից առաջ քշել Թիւրքերին, որպէսզի սրանք չամրանան Խանասորի լեռնանցքի մօտ։

«Ապրիլի 27 և 28-ին առաջնալով լայն զօրաճակատով, մենք կուսով գրաւեցինք մի շարք գիւղեր Զիարի-չայ գետի ձախ ափի աւազանում. Թիւրքերը ցերեկով մի կերպ դիմադրում էին մեզ, իսկ գիշերները թողնում էին իրանց խրամատները և հաքաշվում, երբեմն փախստական ձևով։

«Բայց ապրիլի 29-ին մեր զօրաբաժնի աջ զօրաթևը հանդիպեց յամառ դիմադրութեան Թիւրքաց հետիոտն գնդերի կողմից։ Գործը սիրական Դ-ր գիւղի մօտ էր։ Մեր հետախոյզները պարզեցին, որ Թիւրքաց մի զօրամաս ամրանում է այդ գիւղի եռի մասում։ Հարկ էր ձեռք առնել իսկոյն միջոցներ և թոյլ չը տալ Թիւրքերին ամրանալ լեռներում, որ հնարաւորութիւն կը տար մնացած Թիւրքաց զօրամասերին կենտրոնանալ այլ ուղղութեամբ։ Մենք սկսեցինք ամրակոծել գիւղը ապրիլի 29-ի արեւածագին։ Թիւրքերը, ըստերևոյթին կամենալով մեզ գրաւել աւելի մօտ, պատասխանում էին թոյլ հրացանաձգութեամբ։ Սակայն յարձակում գործել համարեա բաց ռազմաճակատով—շատ վտանգաւոր էր, ուստի և մեր զօրամասի մի խումբն անցաւ գիւղի Թիկունքը և դուրս ելաւ Թիւրքերի դէմ նրանց ձախ զօրաթևի կողմից։ Սկսվեց տաք հրացանաձգութիւն, որ տևեց 4—5 ժամ։ Երեկոյեան դէմ մեզ աջողվեց ցիրուցան անել Թիւրքերին, բայց նրանք շարունակում էին յամառ կերպով պաշտպանվել N գիրքի մօտ, գիտենալով թէ օրքան դժուար է նրանց համար նահանջել ազատ դաշտով... Գիշերը Թիւրքերը թողին այդ դիրքն ևս։

«Ապրիլի 30-ին և մայիսի 1-ին մենք ունենալով սուկ անշան ընդհարումներ, շարունակեցինք ետ մղել հակառակորդին և մայիսի 1-ի երեկոյեան հասանք Խանասորի լեռնանցքին։ Այստեղ մենք ստիպված էինք յաղթել բնական արգելքներին, մաուանդ 3 օրշին ձեան։

«Մայիսի 2-ի առաւօտեան մեր առաջապահ զօրամասերը մեծ դժուարութիւններով և մագլցելով լեռնիվեր, առաջանում էին, չը հանդիպելով թշնամուն։ Մի զօրախմբին հետևում էր երկրորդը, երրորդը և երեկոյեան դէմ մենք, թէև տանջված, գրաւեցինք լեռնանցքը։ Պարզվեց, որ Թիւրքերը, տեսնելով դիմադրելու անկարելիութիւնը և վախենալով ցրուից, ետ են քաշվել լեռնանցքի այն կողմը և դիմում են դէպի Բաշ-Կալէ։

«Որքան էլ որ մենք յոգնել էինք, բայց մնալ 8000 ֆուտ բարձրութեան վրա և ձեան մէջ՝ այնքան էլ հաճելի չէր, և մենք աճապարեցինք իջնել լեռնաշղթայի միւս կողմը և այդպիսով, մայիսի 3-ին, վերջնականապէս տիրացանք Խանասորի լեռնանցքին»։

ազդեցութիւնը։ 40 տարիների խարխափումներից յետոյ վերջապէս իրականանում է այն, ինչ որ Գլադստոն պաշտպանում էր դեռ 1875-ին՝ մի անկեղծ անգլո-ռուսական համաձայնութիւն։

Ուրեմն այժմ իրաւունքով ասվում է, որ դաշնակից պետութիւնների բաղդաւոր դասաւորութիւնը և համաձայնման շահերի կատարեալ համերաշխութիւնը, նրանց յաղթութեան դէպքում, կը լուծեն մի շարք պատմական խնդիրներ և քաղաքական առեղծուածներ, խնդիրներ՝ որոնք երկար տարիներով ի դերև են հանել մի քանի սերնդի պետական մարդկանց և դիւանագէտների ճարտարութիւնը։

Ցաւախ նկատվել է, որ զօրականներ և կամ ծովակալներ գործելով անկախաբար դիւանագիտութեան և քաղաքագէտների հարկադրած կշռանդումներից՝ վաղուց լուծած կը լինէին այդ կարգի հանգոյցները. յիշվում է մի օրինակ՝ Ցանատանի անկախութեան պատերազմում ծովակալ Գոդրինգտոնի դերը. Թիւրքերը վարանում էին ընդունել կատարված իրողութիւնը, և անգլո-ֆրանս-ռուսական դաշնակիցներն էլ օշ նուազ վարանում էին, երբ «Թիւրքմացութեամբ» միջամտեց դաշնակից նաւատորմի հրամանատար անգլիացի Գոդրինգտոն և Նաւարինոյի առաջ քանդելով (1827 թ.) սուլթանի և Եգիպտոսի փաշա Մէհմէդ Ալիի միացեալ նաւատորմը՝ նուիրագործեց Յունաստանի քաղաքական անկախութիւնը։ Արդիւնաւոր մի միջոց է դա, որ շատ քիչ անգամներ թոյլատրվել է զօրականներին իրանց կառավարութիւնների կողմից։

Մի այդ կերպ միջոց կարող կը լինէր լուծել հիմնապէս միջազգային մեծագոյն դժուարութիւնը—Մերձաւոր Արևելքի հարցը—որի կնճռոտ բարդութիւնը թուում է մատնում իր վերջնական լուծման երեք մեծ դաշնակիցների՝ Դարդանէլի և Կ. Պոլսի դէմ սկսած նաւային յարձակումով։

«Մեր ժամանակի ամենամեծ պրոբլէմներից,—ասում էր յայտնի գերմանացի պատմագիր դր. Դեոլինգերը *) 1879-ին,—օշ մէկը աւելի հետաքրքրական և գրաւիչ է, որքան այսպէս ասած արևելեան հարցը, արժանի օշ միայն պրոֆեսիոնալ քաղաքագէտների ուշադրութեան, այլ նաև աշխարհի անցքերով հետաքրքրվող ամեն սրամիտ անհատի համար։ Դա մի առանցք է, որի վրա դարձել է XIX դարի ընդհանուր քաղաքականութիւնը, և այդպէս էլ կը լինի յետագայ դարում։ Դա այն հարցերից չէ, որ միայն երէկվանից ի վեր վրդովել է Եւրոպայի խաղաղութիւնը, օշ էլ ներկայ դարի ծնունդն է դա։ Անցնող 500 տարիների ընթացքում նա ունեցել է զօրաւոր ազդեցութիւն համաշխարհային պատմութեան ուղղութեան վրա։ Բրոդէուսի պէս նա ստացել է այլազան ձևեր, կրել ու ծնուցել մի շարք փոփոխութիւններ։ Եւրոպայում առնասարակ ստորադասել են նրա կարևորութիւնը... Եւրոպայի ճակատագիրը սեղմ կերպով կապված է արևելեան հարցի հետ»...։

Տիրապետող կարծիքն է, որ այս անգամ լուծվում է այդ շարաբաղդ հարցը. սակայն այժմվանից հասարակական կարծիքի լիդերներ այստեղ հարցնում են՝ ինչ ուղղութեամբ պիտի լուծել այդ հանգոյցը։ Ոչ օք համարեա չի համարձակվում պատասխանել որոշ կերպով և ասել մի դրական բան. գուցէ այդ հարցին պատասխանելուց առաջ, էական է նրան մօտենալ գիտակցաբար և հետևել արևելեան հարցի ծագման և էվոլիւսիոնի ընթացքին, որոշապէս և յստակօրէն նկատել այդ բազմակողմանի ֆրպռի իսկ յաւերժացուցած և անմահացուցած ասնանց յիշատակը։

Թիւրքաց Հայասատանի ասկալի ջարդերու ժամանակ, երբ Վասպուրականի գեղաձիծաղ դաշտերն ու ծաղկաղարդ ծործորները հայերու արիւնով կը ներկուէին, և հարիւրաւորներ թշնամիին սուրին զոհ կերթային, և ամեն կողմ լաց ու շիւան կը տիրէր, և թշնամիին ճիրաններէն ազատուելու բաղդ ունեցող թշուառները սովի և անօթութեան ուրուականէն հալածական՝ կմախքացած և դիակնացած՝ բոյսերու արմատներով յուսահատ պայքար կը մղէին մահուան դէմ, և մեծ մասը սրտակեղեք վիճակով վերջապէս կը հանգչէին անոր սառն գրկին մէջ։ Վանի ամերիկեան միսիոնարները իսկոյն օգնութեան կը փութան Անարատ հայի եղերական ու քամնելի վիճակը ամերիկեան բարեսէր ազգին և ի լուր աշխարհին յայտարարելով, օգնութիւն կաղերսեն, որուն կը հետևի բարերարներու անհատնում օժանդակութիւնը և միլիոնաւոր ռուբլիներու հոսումը։ Ցայժմ անանք միայն եւ միայն քրիստոնէական և մարդասիրական զգացումներէ առաջնորդուած, զոհելով իրենց հանգիստը, տիւ ու գիշեր կը սկսին աշխատիլ կորզելու լքուած յուսահատներու կեանքը։ Հազարաւոր թալանուած երկրագործներու կը հայթայթեն լծկան անասուններ և անհրաժեշտ բոլոր գործիքներ, սերմնացու, զգեստ և այլն։ Իսկ քաղաքի կարօտ բնակչութեան համար մանածի և կտուրգործութեան արհեստանոցներ կը հաստատեն (Վանի միջակ և կարօտ դասակարգը առ հասարակ այդ արհեստներով կը պարապի), որոնցմով կը ջանան կանոնաւոր գործ հայթայթել աշխատող հազարաւոր ձեռքերու, մարդ կամ կին, և այսու առանց ժողովրդի արժանապատուութեան դիպչելու և դայն մուրացկանութեան գծուծ սովորութեան վարժեցնելու, պատուաւոր միջոցներով կը կանոնաւորեն անոր անհրաժեշտ պիտոյքները։ Դեռ աւելին կայ. կորդեգրուին 550 որբեր և որբուհիներ, որոնց համար միսիոնարական խիստ ընդարձակ և զեղեցիկ շրջանակին մէջ՝ իսկոյն կը կառուցուին յարմար շէնքեր ուսումնարանի, ննջարանի, ճաշարանի, լուացարանի և բաղնիքի համար, կը բացուին, նոյն շրջանակի մէջ, կօշկարարի, դերձակի, ատամնանկի, հիւսնի, խաղախարդի, թիթեղագործի, երկաթագործի արհեստանոցներ մանչերու համար, իսկ միայն դերձակի և ատամնանկի արհեստանոցներ որբուհիներու համար, որոնք իրենց ժամանակի մէկ մասը ուսման, իսկ մէկ մասն իրենց ընտրած արհեստներուն կը յատկացնեն։

Բոլոր այս որբերը, որոնց թիւը հետզհետէ հազարի հասաւ, կը դաստիարակուէին բառիս բուն նշանակութեամբ ազգային ոգւով, ազգին օգտակար և պատուաւոր անհատներ ըլլալու առաջադրութեամբ, առանց ոեւէ շարժառիթի։ Պահոց օրերու մէջ որբերը ազատ էին հետևիլ ազգ. եկեղեցւոյ սովորութեանց, որոնց համար պահոց օրերու յատուկ կերակուրներ կը պատրաստուէին, իսկ ամեն շաբաթ տասնապետներու և խմբապետներու առաջնորդութեամբ եկեղեցի կառաջնորդուէին։ Ազգ. եկեղեցւոյ շարականները կը դասաւանդուէին երաժիշտ ուսուցչի մը կողմէ։

Տարբեցները հետզհետէ կը զրկուէին իրենց գիւղերը՝ տալով անոնց լծկան անասուն, արօր, սայլ և ուրիշ անհրաժեշտ գործիքներ և սերմացու։ Եթէ երկրագործութեամբ պիտի պարապէին, իսկ բոլոր գործիքներ՝ ամեն այն արհեստներուն, որոնց հետևած էին։ Այսպէս, այդ անտէրունչ որբերը առանց նեղութիւններու մասնակցելու դիւրութեամբ կը վերականգնեցնէին իրենց հայրենական քանդուած օջախները։ Քանի՞ քանի՞ առանձնակ որբուհիներու օժիտը և ամուսնական ու ընտանեկան բոլոր պէտքերը լրիւ հոգալով՝ իրենց ընտրած որբերու և կամ ուրիշ յարմար երիտասարդներու հետ ամուսնացուցած և երջանիկ ընտանիքներ կազմելու պատճառ եղած են։

Շատ անգամ միսիոնարք իրենց ունեցած ազդեցութիւնը ի գործ դնելով կառավարութեան վրայ՝ որբերու՝ քիւրդերէ գրաւուած հողերը ետ առնելու յաջողած և անոնց յանձնած են ի մշակութիւն։

Եւ այսպէս հարիւրներ, որոնք անտէրունչ իսպառ կորուելու և կամ չքաւորութեան հետ պայքարելով իրենց ծնած օրը անիծելու և արմատէն խլուած խորշակահար ծաղիկներու հանգոյն իսպառ չքանալու դատապարտուած էին, այսօր, շնորհիւ այն օտար միսիոնարներուն, բաղդաւոր ու երջանիկ ընտանիքներ կազմած երկրագործներ, արհեստաւորներ, վաճառականներ և ուսուցիչներ են և շատեր նոյն իսկ եւրոպական ամերիկեան կոլէջներու, համալսարաններու մէջ ուսած բժիշկներ, պրոֆեսորներ և ուսուցիչներ են, իրենց ազգին պատիւ բերող պատուաւոր անհատներ։

Քանի՞ միսիոնարներ նահատակութեան պսակը ընդունած են՝ նահատակութենէ փրկելու համար հայոց կեանքերը Կիլիկիոյ և ուրիշ տեղերու մէջ, և քանիսնե՞ր ընկած վտարուած են Թիւրքիայէն, յայտնի հայասէրներ և հայկական դատը պաշտպանողներ լինելուն համար։ Իսկ ներկայ աշխարհաւէր պատերազմի ժամանակ Ատրպատականի և Հայաստանի մէջ անօրինական և թշնամիին կրից ենթակայ եղող անբաղդ թշուառները միմիայն ապատատ կը զտնեն նոյն բարեսէր ազգի՝ Ամերիկայի զաւակներու ձեռքը լայն բացուած հատատութեանց դռներէն ներս, ատեղապարդ դրօշի հովանոյն ներքև, և անոնց հերոսական ու անձնուէր Ջանից շնորհիւ կազատին Դամոկլեան սուրէն։

Բողոքական հայը ճշմարիտ հայ մըն է, լուսաւորչական հայու մը չափ, հայ արիւնով և զգացումներով տոգորուած։ Կրօնական համոզումները մինչ մարդս ազգային զգացումներէ զրկելու ընոյթն ունին կը կարծէք։ Ամեն անգամ, երբ հայրենիքի շեմքը ի սիրուս աշխարհի տարագրուած իր որդիները սրբազան ու գերագոյն պարտականութեան մը կանչած է, հոն է եղած բողոքական հայը իր դրօշներով և սկիներով, իր գրչով և իր լեզուով, իր սրտով և իր բնմով, իր սուրով և իր կեանքով, նոյն սեղանին վրայ օղջակիզուած իր լուսաւորչական եղբօր հետ, մէկտեղ տառապած, մէկտեղ արտասուած, մէկտեղ կեղեքուած, նոյն կարօտով տաչտրուած, նոյն սիրով այրուած, մէկտեղ տոգորուած և վերջապէս մէկտեղ նահատակուած։ Ներկայ պատերազմէն լոկ քանի մը ամիս առաջ էր, որ մեր ազգ. երեսփոխանական ժողովը ի Կ. Պոլիս՝ այնչափ գովելի և ծափահարելի քայլ մը առաւ միաձայն ու միահաղոյն քուէարկելով և հրաւիրելով ազգի բոլոր հատուածները հաւասար ու համերաշխ գործակցութեան, կրօնականէն զատ բոլոր ուրիշ խնդրոց մէջ, որպէս մի մարմին, և բողոք. համայնքն էր, որ բուռն ուրախութեամբ իսկոյն արձագանգ տուաւ այդ ցանկալի և եղբայրական հրաւէրին, և երբ մեր տառապեալ հայրենիքի փրկութեան ցանկեք թշնամուն և փրկեցեք ձեր կանանց, զաւակներին, հօրենական աստուածների տաճարները և ձեր հայրերի շիրիմները։ Այժմ վճռվում է հարցը»։

Հին հռոմէացիների աչքում արևելեան հարցը կենարօնանում էր Մակեդոնիայի հսկայական հզօրութեան դէմ մղվող պայքարում։ Միջնադարեան քրիստոնեաների համար հարցը ներկայացնում էր որպէս մի կռիւ քրիստոնէութեան և իսլամութեան միջև։ Բիչ յետոյ այդ մենամարտը վերանորոգվում էր Արևմտեան Եւրոպայի ասպետական կարգերի կողմից՝ խաչակրութիւնների ձեռքի տակ։ Շատ զրվել է խաչակրութիւնների դրդապատճառների մասին։ Նրանց վերագրվել են և կրօնական, և հոգեկան, և տնտեսական շարժառիթներ։ Բայց էականապէս նրանք ներկայացնում են մի պատմական երկարատև պայքար խաչի և մահիկի արբանեակութեան միջև,—ասում է Մէրիօտ, Օկսֆորդի համալսարանի պատմութեան պրոֆեսորը։ Եւ գուցէ դա դեռ տիրապետող գիծը կազմում է արևելեան անլուծելի հարցի բարդութեան մէջ։ Իսկ Դրիօ դա համարում է «իսլամի քաղաքական իշխանութեան կործանման հարցը»*)։

Պրուսիայի թագաւոր Մեծն Ֆրիդրիխ (1740-86) և նրան ժամանակակից դիւանագէտներ արևելեան հարցը նոյնացնում էին լիհական գործերի հետ։ Ինչպէս տեսնում ենք, դրանք բոլորը պատկանում են անցեալ պատմութեան և հիմնական հարցի հետ ունեն անուղղակի կապակցութիւն։

Լօնդօն Արշակ Սաֆրաստեան

*) «La Question d'Orient» par E. Driault, 1905, Paris.

ԹԱՑՆ ԱԼ ՁՈՐԻՆ ՀԵՏ ՁԱՑՐԵՆՔ

Աչքիս ինկաւ «Մշակի» 76-րդ համարի մէջ տպուած՝ Արշակ քահ. Տէր-Հսկանեանի «Դարձեալ հայ որբերի մասին» խորագրով յօդուածը, յորում յիշելով բողոքական քարոզիչի մը իր ծուխի կողմէն Պեսրօգրադի կարմիր Խաչին ըրած դիմումը ի մասին ներկայ պատերազմի մէջ օրբացած մանուկներու հոգատարութեան և կրթութեան «լիւթերական ոգով», «անպատկառ» կը նկատէ զայն, և առիթ առած ու աւելի յառաջ երթալով «յանուն մարդասիրութեան և քրիստոնէութեան մոգերի շահատակութիւն» ճանչնալով, «գիշատիչներ, կեղծաւորներ ու փարիսեցիներ» ածականով կոչակէ, ու մինչև իսկ «կեղծ, ան-բարոյական» կանուանէ մեր ազգին մէջ գործող և գործել ուզող և տարբեր յարանուանութեանց պատկանող բոլոր օտարերկրեայ քարոզիչ ու միսիոնար գործիչներ, ի շարս որոց՝ բնականաբար նոյն յարանուանութեանց պատկանող համայնքները, ըստ որում արբուած առաջարկութիւնը յանուն «բողոքական» ժողովուրդի եղած է։

Այժմ կապրինք ժամանակ մը, որ լի է անակնկալներով մեր ցաւատանջ ազգին համար, և որ անհերակայելի և հանւոր կորուստները դարմանելու, անհամար աչքերէն արտասուաց հեղեղները սրբելու համար ազգի բոլոր հատուածները աշխարհի ծայրերէն՝ բաղդաւոր այս օրերուն եղբայրաբար ձեռք ձեռքի տալով անխտիր միութեամբ, համերաշխ գործակցելու հրամայողական և անխուսափելի հարկին ներքը կը գտնուին իրենց բարոյական և նիւթական բովանդակ այժերը լարելով՝ հանդէս գալ և իրենց բոլոր ունեցածը ազգային զոհաբերութեան սեղանին վրայ դնելով՝ զոհել ու զոհուիլ, հասարակական և անհատական այժերով՝ որբացած հայ մանկտին խնամել ու դաստիարակել։

Այո, եղած են ու այժմ ևս կարող են գտնուիլ մարդասիրական ու քրիստոնէական զգացումներու դիմակին ներքև գործող անհատներ և նոյն իսկ համայնքներ, որք առիթէն օգտուելով, «պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ» ուզած են կամ կուզեն։ Բայց կեղծ դրամներու գոյութիւնը՝ գտնուած բոլոր դրամներու կեղծ ըլլալուն ապացոյց համարիլ քիչ մը վաղաժամ չէ՞ արդեօք։ Ոչ օք հայը միշտ ճանչցած է իր բարերարները, թէև նոյն իսկ օտար, և միշտ գնահատած է անանց ասպետական ազնիւ օգին ու նոյն բովանդակութիւնը, և այդ կերպով որոնել այն պատճառները, որոնք դաբերից ի վեր դիմադրաւել են նրա լուծման բազմաթիւ փորձերին։

Երևի ամենից առաջ պիտի որոշել տերմիններ։ Եւ հէնց տերմինների որոշողութեան փորձից սկսում են տարաձայնութիւններ։ Մի անգամ Դիզրայէլիին (լորդ Բիկընսֆիլդ) հարցնում էին, թէ ինչ է իրանական հարցի էութիւնը։ Եւ նա ցինիկօրէն ասում էր. «Ոմանք ասում են, թէ դա մի ֆիզիկական հարց է, ուրիշներ էլ համարում են հոգեկան հարց։ Ոմանք իրանդացիների անաջողութիւնը օրոնում էին արիստոկրատիայի, ուրիշներն էլ երկաթուղիների բացակայութեան մէջ։ Մի օր Հռոմի պապն էր նկատվում պատճառը, մի ուրիշ օր էլ կարտոֆիլի հունձքի պակասութիւնը։ Մինչ այն քամելիոնի բնաւորութիւնը վերագրվել է նաև արևելեան հարցին, և նրա հիմնական լուծումը նկատվել է դժուար։ Ուղիղ թէ ոչ, անգլիացի հեղինակութիւններ նկատել են, որ դժուարութիւնը ծագում է անյիշատակ արևելքի և արևմտեան գաղափարների բաղխումից։ Ի հարկէ մեզ համար հետաքրքրական չի նրա անշօշափելի և աբստրակտ կողմը. այդ երևոյթի խտացած արտայայտութիւնները աւելի հետաքրքրում են մեզ։ Դրանցից առաջինը կարելի է համարել յոյների և պարսիկների հակառակութիւնը, որ մեզ յիշեցնում է Մարատոնի, Դիրմօփիլէի և Սալամիսի հերոսական կռիւները։ Պատմութեան անմահ երևոյթն է կրկնվում։ Ինչպէս բանաստեղծ Ծատուրեան Մոսկվայից երգում է հայի անցնող փառքը և հրաւիրում է հայ տղամարդուն դէպի կռիւ դաշտ, այնպէս էլ 24 դար առաջ Էքիլէս իր «Persae» ողբերգութեան մէջ երգում էր «Առաջ, Էլլադայի զաւակնե՞ր, առաջ դէպի ձեր երկրի ազատութիւնը։ Զարթեցեք ձեր հարազատների՝ Դարդանէլի և Կ. Պոլսի դէմ սկսած նաւային յարձակումով։

*) Տես «Մշակ» № 99.

1) «Life of W. E. Gladstone», by John Morley (Lord). II հատոր։

*) „Vorlesungen über Europäische Geschichte", von Dr. Döllinger. München. 1879. էջ 188։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՆՔ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ *)

IV

Արևելեան հարցի ֆիզիոնոմիան և նրա հիմնական պատճառները ըստ ուրուպացի հեղինակութիւնների։—«Թիւրքական հոգին»։—XIV դարից մինչև XVII-ի վերջը նրանց կայսրութեան ծաւալը։

—o—

«Ինչպէս կատաղի ծովի ալիքներ սրբելով ամեն խոչընդոտ իրանց առաջադիմութեան ընթացքում հասնում են ծովափը և այնտեղ փշրվում են աւազի հատիկների և փոքր ժայռերի վրա, այդպէս էլ Թիւրք բարբարոսութեան հոսանքը դարերի ընթացքում բաղխվել է արևելեան քրիստոնէութեան ժայռին և ասիճանաբար փշրվել է քրիստոնեայ փոքր ազգերի ամուսնութեան դէմ [1]։

Գլադստոն

Մի փոխաբերական ներկայացում է դա արևելեան հարցի էութեան, որ իր կեանքի յաւերժական հետաքրքրութեան և անսպառ եռանդի մի առարկայ էր դարձրել պ. Գլադստոն՝ XIX դարի մեծ մարդկանցից մէկը։ Մի համոզված քրիստոնեայ և ուրեմն սրբանց համակիր արևելեան քրիստոնեաների դատին, մի ջերմ հաւատացող ազգ փոքր ազգերի վերանորոգչական և քաղաքական ընդունակութիւններին, նա 1875—78-ին արևելեան հարցի ամենաուշ տաղնապում, տեսնում էր միմիայն մի հնարաւոր և արմատական լուծում այդ կնճռոտ հարցին՝ բացարձակ անկեղծութեամբ համաձայնել Ռուսատանի հետ և հիմքից կարել այդ Գորդեան հանգոյցը։ Սակայն այդ ժամանակ իշխանութեան գլուխն էր կանգնում հրէայ Դիզրայէլ (Բիկընսֆիլդ), որի ուժեղ անձնաւորութեան հանդէպ անշքանում էր հէնց արտաքին գործերի մինիստր Սալսբերիի ազդեցութիւնը։ 40 տարիների խարխափումներից յետոյ, վերջապէս իրականանում է այն, ինչ որ Գլադստոն պաշտպանում էր դեռ 1875-ին՝ մի անկեղծ անգլո-ռուսական համաձայնութիւն։

Ուրեմն այժմ իրաւունքով ասվում է, որ դաշնակից պետութիւնների բաղդաւոր դասաւորութիւնը և համամտման շահերի կատարեալ համերաշխութիւնը, նրանց յաղթութեան դէպքում, կը լուծեն մի շարք պատմական խնդիրներ և քաղաքական առեղծուածներ, խնդիրներ՝ որոնք երկար տարիներով ի դերև են հանել մի քանի սերնդի պետական մարդկանց և դիւանագէտների ճարտարութիւնը։

Ցաւախ նկատվել է, որ զօրականներ և կամ ծովակալներ գործելով անկախաբար դիւանագիտութեան և քաղաքագէտների հարկադրած կշռանդումներից՝ վաղուց լուծած կը լինէին այդ կարգի հանգոյցները. յիշվում է մի օրինակ՝ Յունաստանի անկախութեան պատերազմում ծովակալ Գոդրինգտոնի դերը. Թիւրքերը վարանում էին ընդունել կատարված իրողութիւնը, և անգլո-ֆրանս-ռուսական դաշնակիցներն էլ օշ նուազ վարանում էին, երբ «Թիւրքմացութեամբ» միջամտեց դաշնակից նաւատորմի հրամանատար անգլիացի Գոդրինգտոն և Նաւարինոյի առաջ քանդելով (1827 թ.) սուլթանի և Եգիպտոսի փաշա Մէհմէդ Ալիի միացեալ նաւատորմը՝ նուիրագործեց Յունաստանի քաղաքական անկախութիւնը։ Արդիւնաւոր մի միջոց է դա, որ շատ քիչ անգամներ թոյլատրվել է զօրականներին իրանց կառավարութիւնների կողմից։

Մի այդ կերպ միջոց կարող կը լինէր լուծել հիմնապէս միջազգային մեծագոյն դժուարութիւնը—Մերձաւոր Արևելքի հարցը—որի կնճռոտ բարդութիւնը թուում է մատնում իր վերջնական լուծման երեք մեծ

*) Տես «Մշակ» № 99.

1) «Life of W. E. Gladstone», by John Morley (Lord). II հատոր։

կալի արշալոյսը ծագի, և այդ ազատութիւնը նախօրեակն ըլլալ և մեր մայր եկեղեցւոյ հնադարեան ծէսերէ և աւանդութիւններէ ազատագրութեան, յայնժամ, այն սքանչելի օրը կրկին առաջին անգամ բողոքական հայը պիտի պարզէ իր միութեան ձեռքը և ուրախութեամբ գոչէ՝ «Տուր ձեռքդ, եղբայր, եղբայր ենք մենք, որ մերկաւ էինք զատուած»։

Ղարաղալա — Արշակ Հիւսեան

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 մայիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմէ.

Շավէլի շրջանում առանձին փոփոխութիւն չը կայ։ Կռիւները շարունակվում են

Օսովէցի մօտ, Սօսնի գիւղից ոչ հեռու թշնամին ապարդիւն փորձ արաւ յարձակում գործելու մեզ վրայ։

Լօմժինի ուղղութեամբ մի քանի տեղ ուժեղ թնդանօթաձգութիւն է։

Վիսլայի ձախ ափում մայիսի 11-ին և 12-ի գիշերը մենք վանեցինք թշնամու մի քանի թոյլ յարձակումները։

Սանի մօտ՝ Յարօսլաւի և Պերեմիշլի միջև մայիսի 12-ի ընթացքում շարունակվեց չափազանց ուժեղ կռիւ։ Պերեմիշլի և Ինէստրի մեծ ճահճի միջև թշնամին շարունակում է ուժեղ «մրրկային» կրակ և կուռ է հանում խոշոր ոյժեր Գուսակով-Կրուկենիցա ռազմավայրում։ Այդ շրջանում թշնամու բոլոր յարձակումները մենք աջողութեամբ վանեցինք։

Անդրդնէստրեան շրջանում և Բուկովինայում փոփոխութիւն չը կայ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 մայիսի

ԼՕՆԴՕՆ.— Ֆիլդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.

Մեր զօրագնդի մի քանի մասերը Իպրից դէպի արևելք, որ մենք կորցրինք երէկ թշնամու յարձակման ժամանակ, երբ նա գործադրեց խեղդող անհամար գազերը, դեռ մնում են գերմանացիների ձեռքում։ Սակայն փորձը ցոյց է տալիս, որ զգոյշ վարվելով կարելի է աջողութեամբ վանել խեղդող գազերի օգնութեամբ կատարվող յարձակումները։

ՊԱՐԻԶ.— Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն.

«Արրասի հիւսիսային մասում մենք բաւականին առաջացանք։ Մենք վերցրինք մի քանի ռազմակէտեր»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 մայիսի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակի պաշտօնական հաղորդագրութիւն.

Ռազմական գործողութիւնները տեղի ունեցան Տիրոլի սահմանում։ Մայիսի 11-ին մեր զօրքերը դիմելով յարձակման, զրաւեցին հետևեալ կէտերը. Ֆորչէլուն, Մօնտէօցցօն, Տանալէն, Կաֆարօ գետի կամուրջը, Զուդիկարիա կիրճը, Ֆէրրարի-Մօնտէ-Բայլդոյից դէպի հիւսիս ընկած հողամասը, Մօնտէ-Կօրնօն, Մօնտէ-Ֆարբիանօն, Պասուբիօն, Մօնտէ-Բօֆէլանը և Լաոգրին, ինչպէս նաև Բրէնտի կիրճերը։ Մենք վերցրինք որոշ թիւ գերիներ։ Մենք զրաւեցինք Կադորում բոլոր սահմանակից կիրճերը։

Թշնամու թնդանօթները անհեռանալ ոմբակոծեցին Միսուրինա լճի մի մասը Կարնիայի սահմանում։

Լոյս մայիսի 12-ի գիշերը սուլինային յարձակումով մենք զրաւեցինք Ռնֆէրնօ կիրճը և Դէրագօ լճի ծայրը՝ Ֆրիուլիի սահմանագլխում։

Մայիսի 12-ին Իզոնցոյի միջին հոսանքով մենք աջողութեամբ շարունակեցինք մեր արշաւական գործողութիւնները Կապօրէտտոյի շրջակայքում և բանակեցինք մեր զրաւած վայրերում Օդրիոյի և Իզոնցոյի միջև։

Աւստրիական թնդանօթներն ապարդիւն տեղը ոմբակոծում էին այդ բարձունքները Սանտա-Մարիա և Սանտա-Լիւչիա գիրքերից։

Տօլմէնօյի հիւսիս-արևմուտքում, Իզոնցոյի ստորին հոսանքում մենք շարունակում ենք առաջանալ, ձգտելով հասնել այդ գետի ափերին։ Թշնամին ամենուրեք նահանջում է, ոչնչացնելով կամուրջները։

Մեր օդաչուները ռումբեր ձգեցին Մօֆալկօնէի էլեկտրական և երկաթուղային կայարանների վրա։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
12—13 մայիսի

ՀՌՕՄ. — Տեղեկութիւններ են ստացվել, որ Բերլինի և Վիէննայի իտալական դեսպանները երէկ Շվէյցարիայով մեկնեցան։ Պարզված է, որ Բարլեթտին ոմբակոծող աւստրիական ականաւորները ունեցել են անգլիական դրօշակ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բերլինից պաշտօնապէս հաղորդում են, որ գերմանական և աւստրօ-ունգարական կառավարութիւնները տեղեկացրել են դաշնակից խորհրդին, թէ կը յարգեն շվէյցարական չեզոքութիւնը Իտալիայի հանդէս գալու առիթով։

Այդ առիթով դաշնակից խորհուրդը յանձնարեց իր ներկայացուցիչներին յայտնել, որ Շվէյցարիան ճշդում է իր չեզոքութիւնը։ Հռոմի շվէյցարական դեսպանը յանձնառու գերմանական շահերի պաշտպանութիւնը Իտալիայում, Բերլինի շվէյցարական դեսպանը—իտալացիների շահերի պաշտպանութիւնը Գերմանիայում։

ՊԱՐԻԶ.— Պատգամաւորների պալատ։ Դիւանագիտական օթեակումն է Տիտոնիս։ Դէշանելը արտասանում է հակիրճ ճառ, ըստ մէջ ընդգծում է, թէ Իտալիան, ինչպէս և 56 տարի առաջ, չէ անջատուլու Ֆրանսիայից։ Դէշանելի առաջին իսկ խօսքերի ժամանակ պատգամաւորները տաքի են կանգնում և բուռն կերպով օրհնաբանում են Տիտոնիին։ Ցետոյ ճառ է արտասանում Վիվիանին, որի մէջ կառավարութեան անունից օրհնում է իտալական ազգին։ Վիվիանիի ճառը առաջ է բերում աղմկալի ծափահարութիւն։

ԱԹԵՆՔ.—Իտալիայի հանդէս գալը ազդեց Յունաստանի պետական արժէթղթերի վրա։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երէկ և այսօր Պ. Հ. Գ. ստանում է հեռագիրներ Ռուսաստանի դաշնակից քաղաքներից, որ Իտալիայի պատերազմի յայտարարութիւնը թողել է օգտաւէտ տպաւորութիւն։ Շատ քաղաքներում տեղի են ունեցել ցոյցեր. օրինակ հսկայական ցոյց կայացել է Վարշավայում, ուր լեհերի և ռուսների բազմահազար ամբոխը Թագաւոր Կայսրի և Գերագոյն Զօրահրամանատարի պատկերներով հաւաքվել է իտալական հիւպատոսարանի մօտ և անցել է քաղաքի փողոցներով։

ՀԱՄԱԼԻՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 մայիսի

ԱԹԵՆՔ.— Թագաւորի վերքը լաւանում. ընդհանուր դրութիւնը նախկինն է։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Հրատարակվեց բարձրաստիճան հաստատած մինիստրների խորհրդի որոշումը, որով աւստրոհնգարականներին, ունգարահնգարականներին և գերմանահնգարականներին, որոնք ունեն սլաւօնական, իտալական և ֆրանսիական ծագում, նաև քրիստոնեայ թիւրքահնգարականներին, որոնք օրէնք պաշտօն են վարում ազատվողը ընկերութիւնների մէջ կամ կառավարում են անշարժ կալքեր, և խնդրագիր են ներկայացնում ռուսահնգարականութիւն ընդունելու մասին, իրաւունք է տրվում պահել յիշեալ պաշտօնները, եթէ ամէն անգամ ստացվի ներքին գործերի մինիստրի համաձայնութիւնը։

Մինիստրների խորհուրդը քննելով Պոլէժաէվի նախագահութեամբ գործող միջվարչական մասնաժողովի եզրակացութիւնը՝ քաղաքներում զինի և գարեջուր վաճառելու թոյլատրութեան մասին, գտաւ այդպիսի թոյլատրութիւնը վաղաժամ, և մտնելով զինեգործների ծանր կացութեան մէջ, իրաւունք տուեց արդարադատութեան մինիստրին մշակել նախագիծ հնարաւորութիւն տալու զինեգործներին իրանց հետ կապված պայմանագրերը լիկվիդացիա անելու իրաւունք։

Մինիստրների խորհուրդը որոշեց երկարել մինչև 1918 թ. յունվարի 1-ը լուցկիների, ծխախոտի, գլանակների և թղթի աւելացված ակցիզի գանձումը։

Մինիստրների խորհուրդը բաց թողեց 6 միլիոն ռուբլի հակաժանտախտային մասնաժողովին հակավարակիչ ձեռնարկութիւնների համար։

Վերջին 8 ամսում նկատվում է, որ խնայողական գանձարաններին պահ տրվող գումարների քանակը աստիճանաբար աճել է համեմատած 1913—1914 թ. թ. համապատասխան ամիսների հետ։ Այդ պատճառով ֆինանսների մինիստրութիւնը շտապով մշակում է մի շարք ձեռնարկութիւններ խնայողական գանձարանների թիւը մեծացնելու և նրանց գործունէութեան շրջանը ընդլայնելու նպատակով։

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ ԱՂԳԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 մայիսի

ԼՕՆԴՕՆ.—Կարինէտի նոր կազմը. պրեմիէր-մինիստր՝ Ասկվիտ, մինիստր առանց պորտֆէլի՝ Լէնսդաուն, լորդ-կանցլեր՝ սրբ Սաէնլի Բէկմասէը, գաղտնի խորհրդի անդամ՝ լորդ Կրիւն, պետական կնիքի պահպանող՝ լորդ Կէրզոն, պետական գանձատան կանցլեր՝ Մակկէնա, ներքին գործերի մինիստր՝ սրբ Ջոն Սայմոն, արտաքին գործերի մինիստր՝ սրբ Գրէյ, գաղութների մինիստր՝ Բոնար-Լոու, Հնդկաստանի գործերի ստատ-սեկրետար՝ Զեմբերլէն, զինուորական մինիստր՝ Կիչէնէր, զօրքի պիտոյքները հայթայթող մինիստր՝ Լլոյդ-Ջորջ, ծովային մինիստր՝ Բալֆուր, առևտրի մինիստր՝ Բէնիման, տեղական ինքնավարութեան գործերի մինիստր՝ Լոնգ, Լանկաստէր դքսութեան կանցլեր՝ Զէրչիլ, Իրլանդիայի գործերի ստատ-սեկրետար՝ Բերլէյ, Շոտլանդիայի գործերի ստատ-սեկրետար՝ Մակենզի, երկրագործութեան մինիստր՝ Սէլբորն, հասարակական գործերի կոմիսար՝ Գարկորդ, ժողովրդական լուսաւորութեան մինիստր՝ Դենդէրսոն, գեներալ-ատտորնէյ (դատախազ)՝ սրբ Էդուարդ Կասօն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13 մայիսի

ՍՊԱՀԱՆ.—Կավէրի սպանութեան մէջ կասկածվողներից մէկը տարվեց Թէհրան գերմանական հիւպատոս Սրիւերի ձեռքով, միւսը—գերմանացի ծառայողներից է և անյայտացել է։ Զը նայած ժանդարմերիայի ձեռք առած միջոցներին, դրութիւնը մնում է յուզալի։

ԹԷՀՐԱՆ.—Պարսկաստանում տեղի ունեցած վերջին դէպքերի պատճառով, որոնք ճշդում են գերմանական-թիւրքական ագիտացիայի սպառնական բնոյթը, ռուսաց կառավարութիւնը աւելացնում է ռուս զօրքերի թիւը Ղազվինում և Խոյում։ Զօրքերն են իջել թնդանօթներով ենթէլիում և դիմում են դէպի Ղազվին։ Պարսիկ կառավարութիւնը իրազեկ է եղել, որ ռուս զօրքերի գալուստը չէ հանդիսանում թշնամական քայլ Պարսկաստանի վերաբերութեամբ, որ Կավէրի սպանութեան առիթով ձգտում է ընդառաջել Ռուսաստանի արդար պահանջներին։ Այդ պատճառով մեր զօրքերի ներկայութիւնը Ղազվինում կոչված է ազդելու տեղական թշնամի ցեղերի վրա, որոնք ենթակայ են մեր հակառակորդների ազդեցութեան։

Թէհրան է եկել ռուսաց դեսպանի հետ տեսնվելու համար Ղազվինի մեր զօրքերի հրամանատարը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— «Բ. Շ.»-ին հեռագրում են Օդեսայից, որ Կ. Պոլսի իտալական դեսպան Գաղօնին ստացել է Բ. Դրան մէջ իր անցագրերը և մեկնում է։

— Լուրերի համաձայն, Կ. Պոլսում սպանվել է իտալական հիւպատոսը։

— Լուրերի համաձայն, Բուլգարիան փոխարինել է Տիսան։

— Բուդապէշում անկարգութիւններ են։

— Հռոմից հեռագրում են, որ հասարակական կարծիքը պահանջում է գրաւել այն բազմաթիւ պալատները, դղեակները և պատմական յիշատակարանները, որոնք պատկանում են աւստրիացիներին Իտալիայում։

— «Բ. Բ.»-ին հեռագրում են Կոպէնհագէնից, որ իտալական թագաւորը յայտարարել է քաղաքական ամնիստիա։

— Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի մամուլի օրգանները շարունակում են ամենաջերմ դարձուածքներով յօդուածներ նուիրել Իտալիայի հանդէս գալու առիթով։ Բոլորի կարծիքով, Իտալիայի հանդէս գալուց յետոյ պէտք է սպասել, որ բարբարոսութեան դէմ սկսված՝ յանուն քաղաքակրթութեան ու ազատութեան՝ կռիւը կը մօտենայ իր վախճանին մօտիկ ապագայում։

— Բուլգարիայի պատերազմ յայտարարելը դարձել է օրվայ խնդիր։ Երբեակ համաձայնութեան հետ վարվող բանակցութիւնները համարեա վերջանում են։ Բուլգարիայի զօրքը կազմ-պատրաստ է։ Տեսնվում են միայն վերջին անհրաժեշտ պատրաստութիւնները։

— Յունաստանը ամեն րոպէ սպասում է երբեակ համաձայնութեան ազդանշանին յայտարարելու պատերազմ Թիւրքիային։

— Հեղինակաւոր աղբիւրից տեղեկացնում են, որ եթէ այժմ Բուլգարիան համաձայնութիւն յայտնէ հանդէս գալու յօգուտ երբեակ համաձայնութեան, վերջինից կըստանայ վճռական մերժում։

— «Բ. Բ.»-ը ամենատոյդ աղբիւրից յայտնում է. «Շվէյցիայի ռազմի մտորումների լուրերը չեն համապատասխանում իրականութեանը։ Շվէյցիայի և Ռուսաստանի միջև յարաբերութիւնները լաւ են։ Ոչ մի տուեալ չը կայ, որպիսին դառնայ անհանգստութեան առարկայ»։

— Իտալիան դաշնակիցների օրինակով թոյլ չէ տալիս թշնամիներին մտնել զօրծող բանակը։

ԻՏԱԼԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՅԺԵՐԸ

Իտալիայի ցամաքային զինված ոյժերի թիւը, իտալական զինուորական մինիստրութեան պաշտօնական յայտարարութեան համաձայն, որ տպվեց պաշտօնական „L'Esercito Italiano" օրգանում, 1914 թ. սեպտեմբերին հաշվում էր 822,747 հոգի առաջնակարգ զօրք, 328,601՝ երկրորդ կարգի և 2,284,802 երրորդ կարգի։ Ընդամենը 3,433,150 մարդ։ Սա կազմում է Ֆրանսիայի զինված ոյժի մի երրորդ մասը։

Ինչ վերաբերում է Իտալիայի նաւատորմին, ընդհանուր չափով նա բռնում է 647,286 տոն և գրաւում է վեցերորդ տեղը համաշխարհային նաւատորմերի շարքում (Անգլիայից, Գերմանիայից, Միացեալ Պետութիւններից, Ռուսաստանից և Ֆրանսիայից յետոյ), արտիլերիայի քանակով (1,848 թնդանօթ) նա բռնում է հինգերորդ տեղը (առաջին տեղը բռնում է Անգլիան՝ 2,878 թնդանօթ, երկրորդ Ֆրանսիան՝ 2919, երկրորդ Ռուսաստանը՝ 2446, չորրորդ Գերմանիան՝ 2194), ականային գործիքներով (415) Իտալիան բռնում է չորրորդ տեղը (առաջինը Ֆրանսիան՝ 900, երկրորդ Անգլիան՝ 873, երրորդ Ռուսաստանը՝ 448, իսկ Գերմանիան 350 գործիքներով բռնում է հինգերորդ տեղը)։ Իր զինուորական կազմերով ու մթերասայլերով Իտալիան բռնում է վեցերորդ տեղը (առաջինը Անգլիան՝ 197,147, երկրորդ Գերմանիան՝ 57,000, երրորդ Ֆրանսիան՝ 50,953, չորրորդ Ռուսաստանը՝ 50,000, հինգերորդ՝ Միացեալ Պետութիւնները՝ 50,000)։

Բացի այդ Իտալիան ունի 15 մեծ ռազմանաւ, 5 զրահակիր՝ տիպերը պաշտպանելու համար, 26 յածանաւ (զրահապատ և զրահածածկ), 29 հակա-ականաւ, 28 էսկադրոնի ականակիր, 66 ականակիր և 17 սուզանաւ։

Ահա այն ոյժերը, որ Իտալիան հանում է կռիւի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ծան. Խմբ.—«Մշակի» № 95-ում տպված ցուցակի մէջ տեղի է ունեցել մի սխալ։ Թիֆլիսի Առևտր. Արդիւնաբ. Ընկ. նուիրած գումարը, որ եղել է 538 ր. 62 կ. (տես նամակ, «Մշակ» № 91), տպված է սխալմամբ 583 ր. 62 կ., որով ընդհանուր գումարն ևս փոխանակ լինելու 30,228 ր. 72 կ., տպվել է 30,273 ր. 72 կ., այն է 45 ռուբլով աւելի։

Այնուհետև ստացել ենք. 1) Ֆեդչենկո կայարանից, Աւետիս Աղաջանեանի միջոցով հանգանակված Զատկի տօների առիթով (նուիրատուների ցուցակը կը տպվի առանձին) 150 ր., 2) Մարդակերտ գիւղից (Զիվանշիրի գաւառ), Արգար քահ. Տէր-Յովհաննիսեանի միջոցով հանգանակված, յանձնելի Էջմիածնի գլխ. յանձնաժողովին՝ 10 ր., 3) Թիֆլիսում՝ Գրիգոր Ֆարրաշեանից 5 ր., 4) Շահրուդից (Պարսկաստան) Մկրտիչ Սաֆարեանի միջոցով հանգանակված տեղական հայ գաղութի մէջ (նուիրատուների ցուցակը կը տպվի) 190 ր., 5) Արկադիէ - Սեմենովսկայայից (Ամուրեան շրջան), Նիկողայոս Բաղդասարեանի միջոցով հանգանակված տեղացիների մէջ (նուիրատուների ցուցակը կը տպվի), յանձնելի Նպաստամատոյց Ընկերութեան 519 ր. 50 կ., 6) Թիֆլիսում ա) մանկարարձուհի Աստղիկ Դանիէլեանից 2 ր., բ) Լեոն Դանիէլեանից 1 ր., 7) Թիֆլիսում, Սաթենիկ Ղազարեանից, իր մօր՝ Հռիփսիմէ Շեխանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, յանձնելի Նպաստամ. Ընկերութեան 30 ր., 8) Թիֆլիսում ա) Սեդրակ Ե. Պոյաճեանից, հանգուցեալ Կ. Սակայեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, 10 ր., բ) Խաչատուր Ե. Գալֆայեանից, նոյն նպատակով, 10 ր., երկու գումարն ևս յանձնելի Նպաստ. Ընկերութեան. 9) Ռիգայից, Պարսամ Էնֆիաճեանի միջոցով, հանգանակված տեղական հայերի մէջ (ցուցակը կը տպվի) 120 ր., 10) Ղզլարից, Զաքարիա Նարիմանեանից և Ով. Նարիմանեանից 10 ր., 11) Թիֆլիսում, Յակոբ Սուվանեանից, Կ. Սակայեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, 15 ր., 12) Լուգանսկից, եղբարք Սահակ և Հազարապետ Դանիէլեաններից, յանձնելի Էջմիածնի կենտրոն. կոմիտէին, 100 ր.։ Գումարն է 1172 ր. 50 կ.։ Նախորդ ստացված 30,228 ր. 72 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 95) ստացել ենք 31,401 ր. 22 կոպէկ։

ԳՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք. 1) Բաթումից, Սարգիս Աղաջայեանի միջոցով հանգանակված (ցուցակը կը տպվի) 40 ր., 2) Թիֆլիսում, Գրիգոր Ֆարրաշեանից 5 ր., 3) Ղզլարից, Զաք. և Ով. Նարիմանեաններից 10 ր.։ Գումարը 55 ր.։ Նախորդ ստացված 9,200 2 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 95) ստացել ենք 9255 ր. 2 կոպէկ։

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ ՇՏՐԻԽՆԵՐ

Տեղական լրագիրներից մի քանիսի մէջ կարդում ենք յայտարարութիւններ, թէ ինչպէս մի առևտրական ֆիրմա հայրենասիրաբար իր ծախած ծխախոտի որոշ տոկոսիքը յատկացնում է յօգուտ պատերազմից ՀԱՎԱՔՆԵՐԻ։

Շատերը հարց էին տալիս իրանց՝ թէ արդեօք օգտվողը ներկայ պարագայում ոմ է—պատերազմից ՀԱՎԱՔՆԵՐԸ, թէ ինքը ֆիրմատէրը...

Յատկացնել 2 տոկոս, բայց դրա փոխարէն ստանալ տասնեակ տոկոսներ, շատ մեծ առաքինութիւն չէ։

Սակայն, ինչպէս երևում է, 2 տոկոս յատկացնող ֆիրման այդ էլ շատ տեսնելով, ձգտում է այլ կերպ հետ բերել իր այդ հայրենասիրական զոհաբերութիւնը։

Զարչէն ամեն տեղ չարչի է. բայց մանաւանդ զզուելի է հայ չարչին, որ աշխատում է իր կատարած չարչիութեանը այլ բնոյթ և կերպարանք տալ։

Քաղաքում թանգութիւն է տիրում. այդ թանգութիւնը զզալի է մանաւանդ չունոր դասակարգերի համար։

Կան մարդիկ, որոնք աշխատում են բացատրել կամ արդարացնել այդ թանգութիւնը, մեղքը ձգելով երկաթուղու վարչութեան, պատերազմական հանգամանքների վրա և այլն։ Բայց կան և ձայներ, նոյն իսկ հեղինակաւոր և գիտակ անձանց, որոնք մեղադրում են և առևտրականներին, որոնք դիտմամբ, իրանց գրպանի շահերին ծառայելով, արհեստական թանգութիւն են ստեղծում։ Եւ ահա վերջին օտարիկական պաշտօնական տեղեկութիւնները հաստատում են այդ ենթադրութիւնը։ Քաղաքիս խոշոր առևտրական տներից մէկը՝ Սէյլանեան եղբայրների տունը, առաջին կարգի վաճառականներ, թագցրած են եղել 2000 պուդ շաքար և մաս-մաս վաճառում են եղել թանգ գնով։ Երևի ծխախոտից զոհած 2 առկօսը ետ ստանալու համար...

Մարդ կարմրում և ամաչում է, երբ չարչիութեան այդպիսի օրինակների է հանդիպում հայ առաջնակարգ վաճառականի մօտ և յիշում, որ այդ վաճառականին դեռ երէկ մեր խելօք ազգային ղեկավարները արժանացրել էին «ազգային» բիւրօյի անդամ լինելու պատուին։

ԲԱՐԱԵՂ ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐԵԱՆ (ԿԱՐԱ-ՄԵԼԻՔ)

Այսօր Խօջիվանքի գերեզմանատանը հողին են յանձնում Բարսեղ Մելիք-Գրիգորեանցի (յայտնի Բիձայի) աճիւնը։

Ո՞վ չէր ճանաչում Բիձային—Կարա-Մելիքին, որ իր ժամանակին բաւական աչքի ընկնող դեր է խաղացել ամենքիս համար սիրը զործում, որը այսօր արդէն իրականանալու վրա է։

Ամսիս 6-ին, երբ Բիձայի գործը շարունակող ընկերները յաղթական կեցցէներով օդն էին թնդացնում Հայաստանի սիրտ համարված Վանում՝ ծածանելով տանջված հայութեան ազատութեան դրօշակը և այդպիսով Բիձայի երազածն իրականացնում, ինքը Բիձան իր վերջին հրաժեշտն էր տալիս կեանքին, որ արդէն տանջանք էր դարձել նրա համար։

Սակայն թէ գէթ մի 2—3 օր աւելի ապրէր ու լսէր Հայաստանի սիրտ Վանի ազատման լուրը, որքան մեծ պիտի լինէր նրա զգացած բաւականութիւնը, ինչպիսի ուրախութեամբ պիտի նա հրաժեշտ տար կեանքին։

Հանգիստ քեզ, տանջված հայրենիքի տանջված զաւակ։ — Կ. Աղ.

Գ. ՔԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

Աստրախան, 11 մայիսի

Ողբում ենք իր պարտականութիւնների ժամանակ ընկած հասարակական գործիչ, գաղափարական մարտիկ, թանգագին ընկեր Գէորգ քահ. Մկրտումեանի կոթաւտը։

Ընկերների կողմից՝ Վահան Ղուկասեան, Ռոման Աստուածատրեան, Ալէքսանդր Մելիքսէթեան, Գէորգ Սուրթանեան, Դաւիթ Տէր-Ղազարեան, Սարգիս Բախչեան և Անուշաւան Զահրաբեան։

Թիֆլիս, 12 մայիսի

Սրտիս խորին վիշտն եմ յայտնում հայ ազգի անհուն ցաւերով տառապող և թիւրքահայերի շուտափոյթ ազատութեան տենչացող «Մշակի» բազմամեայ աշխատակից և հայ եկեղեցու գաղափարական հոգևոր հովիւ Գ. ք. Մկրտումեանի տարաժամ մահվան առիթով։

Թող թիւրքահայ մեր եղբայրներին շուտափոյթ ազատութիւնն ու բարօրութիւնը լինի նրա վառ իղձերն ու տենչանքները ապրողը ցաւրա և պանծալի շիրիմի յաւիտենական յիշատակին արժանի կենդանի արձանը և անթառամելի պակը։

Զաքարիա ք. Զարդեղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

— Երէկ, Ն. Կ. Մ. Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի թագադրութեան օրը զինուորական տաճարում մատուցվեց պատարագ և կատարվեց գոհաբանական մաղթանք։ Ներկայ էին կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնան, փոխարքայի երկու օգնականները, գեներալ շտաբի պետը, գեներալիտէտը, զօրամասերի հրամանատարները, նահանգապետը, ազնուականների պարագլուխը, դումայի ձայնաւորներ և այլ պաշտօնական և քաղաքացիական անձեր։ Մաղթանքից յետոյ տեղի ունեցաւ զօրահանդէս եկեղեցու բակում։ Նոյն օրը մաղթանքներ կատարվեցին բոլոր դաւանութիւնների աղօթատներում։ Քաղաքը առատօրէն զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառութիւն կար։ Մաղթանք կատարվեց և հայոց Վանքի մայր եկեղեցում։

— Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկ. Ն. Կ. Բարձրութիւն Գերագոյն Զօրահրամանատարից ստացել է հետևեալ հեռագիրը.

Սրտագին շնորհակալ եմ և զգացված. Եթէ Նորին Մեծութիւնը հաճելի լինի թոյլատրել, ես գոհունակութեամբ կընդունեմ ընկերութեան պատուաւոր անդամի կոչումը։

Գեներալ-ադիւտանտ Նիկոլայ

Այս հեռագիրը ստացվել է ի պատասխան Ընկ. հետևեալ հեռագրի, որ ուղարկվել է ապրիլի 28-ին. «Խոնարհվելով Ձերդ Կայսերական Բարձրութեան և Ձեր զինավարութեամբ գործող պանծալի զօրաբանակի

բարձր ծառայութիւնների առաջ, Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկ. իր գոյութեան 50-ամեակի օրը միահամուռ օրօրեց ամենահպատակօրէն խնդրել Ձեր Կայսերական Բարձրութեան ընդունել Ընկ. պատուաւոր անդամի կոչումը։

✦ Հայկ. Կենտրոնական Կոմիտէաը և Բար. Ընկ. խորհուրդը հաստատ տեղեկութիւն ստանալով, որ մինչև 100,000 հայեր Վանի վիլայէթից, գտնվում են խիստ կրիքի մէջ, օրօրել օգնութեան հասնել նրանց, ուղարկելով անհրաժեշտ իրեր, դեղօրայք և բժիշկներ։

✦ Երէկ Սարըկամըշից Թիֆլիս բերվեցին և Նաթլուղի դասաւորում տեղաւորվեցին 156 հոգի հիւանդ և վիրաւոր զինուորներ, որոնցից 25-ը գերի ընկած թիւրք ասկերներ են, իսկ 21-ը հայեր։ Հայերը հետևեալներն են. 1) Սարիբէկ Կարապետեան (Երևանի Իւղա գիւղից), 2) Բաղալեան Համբարձում (Եր. նահ. գեօղակլուեցի), 3) Բէգլար Մանուկեան (Գանձակի ն. լիճենցի), 4) Թադէոս Սիմէոնեան (Քութայիսի նահ. Նորաշէնցի), 5) Արտաշէս Ներսիսեան (շամախեցի), 6) Գերասիմ Խաչատրեան (Երևանի նահ. մաքրավանքցի), 7) Մովսէս Մովսէսեան (Երևանի նահ. չիդամլուեցի), 8) Վահան Խուդոյեան (Եր. նահ. դարղալուեցի), 9) Դաւիթ Մկրտչեան (Էրզրումի շրջանից, կամաւոր), 10) Գարսեւան Եղիազարեան (Եր. նահ. վերին-ախտեցի), 11) Յովհաննէս Ալոյեան (Եր. նահ. մարմիցիեցի), 12) Կարապետ Սարեան (Գանձակի նահ. բինաթլինսկեցի), 13) Վարդան Մելիք-Ազարեան (Եր. նահ. չիդամլուեցի), 14) Անդրէաս Նազարեան (Գան. նահ. նուգարցի), 15) Թադէոս Գէորգեան (Եր. նահ. գեղրիուեցի), 16) Սերգո Գարմոյեան (Քութ. նահ. արդուինցի), 17) Զաւշուշ Ասլանեան (Գանձ. նահ. զօլանլուեցի), 18) Կիրակոս Մազմանեան (Քութ. նահ. նորաշէնցի), 19) Ղազարոս Թորոսեան (Թիֆլ. նահ. գուրնաշէթցի), 20) Պատուական Տէր-Մարտիրոսեան (Գանձ. նահ. բալասեցի) և 21) Եղիա Սանդոյեան (Երևանի նահ. ռեզանլուեցի)։

✦ Հայոց Կենտ. Բիւրօն յօգուտ կամաւորների ստացել է Բախմուտից՝ 1400 ր., Մոզդոկից՝ 701 ր. և Պետրոգրադում ապրող մի ղէվյարացուց 10 ր. 20 կոպէկ։

✦ Այսօր Թիֆլիս կը գայ ռուս տեխնիկների կազմակերպած անխոտական խումբը և կարճ ժամանակից յետոյ կուղևորվի Սարըկամըշի ճակատը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ «ԻՐՇԱԴ» ՊԱՐՍԻԿ ԼՐԱԳՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Թաւրիզ, 2 մայիսի

«Մշակի» ընթերցողներին յայտնի է Թէհրանում հրատարակվող «Իրշադ» պարսկաբարբառ լրագրի հայակեր ուղղութիւնը և այն զրպարտանքները, որոնց համար առաջնորդական փոխանորդ Կարապետ աւագ ք. Մանուկեան*) հեռագրով բողոքել էր ներքին գործերի մինիստրութեան և հայերի առ պարսից պետութիւնն ունեցած դարաւոր հաւատարմութեան վրա մատնանշելով խնդրել էր Ատրպատականի նահանգական կառավարութիւնից նրա գրաւոր վկայութիւնը հայերի մասին, որպէսզի ներքին գործերի մինիստրութիւնը, մօտիկից իրազեկ լինելով Ատրպատականի հայերի բարի վերաբերմունքին, ի գործ դնէ պատշաճ կարգադրութիւն «Իրշադ» լրագրի և նմանների անսանձ բերանները սանձելու համար։

Իբրև բաւարար պատասխան փոխանորդ քահանայի գրած բողոքագրին՝ նահանգապետ Նիզամ-իլ-Միւլքը առաջնորդարան է ուղարկել հեռաւոր բողոքիմաստ հեռագրի պատճէնը, որ ուղարկել է ներքին գործոց մինիստրութեան, որի թարգմանութիւնը նոյնութեամբ ուղարկում եմ «Մշակի» էջերում հրատարակելու համար։ Ցիշեալ հեռագիրը պերճախօս արտայայտութիւնն է հայ-թուրքական յարաբերութեան և կառավարութեան դէպի Ատրպատականի առաջնորդարանն և պարսկահայ ժողովուրդն ունեցած բարւոք վերաբերմունքի։

* * *

Նահանգապետութեան առ ներքին գործերի մինիստրութիւնն ուղարկած հեռագրի պատճէնը «Իրշադ» լրագրի հակահայկական թղթակցութեան առիթով։

Թէհրան, ներքին գործերի Մինիստրութեան բարձրագոյն ատեանին.

Ատրպատականի հայոց առաջնորդական փոխանորդից ստացանք մի բողոքագիր «Իրշադ» լրագրի 23 հէմէլ ամսի № 50-ում Ատրպատականի հայ ազգաբնակութեան հասցէին ուղղված մի թղթակցութեան վերաբերութեամբ, որի մէջ հայերը ամբաստանված են որպէս մուսուլմանների հակառակորդ թշնամիներ։ Բողոքագրում մատնանշված է հայերի հաւատարիմ հպատակութիւնը դէպի պետութիւնը և նրանց հաւասարաշխութիւնը մուսուլման ժողովրդի հետ։ Ի գիտութիւն ներքին գործերի մինիստրութեան ամբողջովին առաջ եմ բերում առաջնորդարանի բողոքագիրը, յանձնելով այն ձեր բարձր ուշադրութեան։

«Թէհրանում հրատարակվող «Իրշադ» թերթի 50-րդ համարում տպված է մի թղթակցութիւն Թաւրիզից՝ զանազան ստոյգ և անվայել բովանդակութեամբ՝ Ատրպատականի պարսկահպատակ հայերի և ասորիների մասին. իբր թէ 10,000 հայ և ասորի կամաւորներ աւերել են 200-ի չափ թուրքական գիւղեր և շատ բռնաբարութիւններ կատարել։ «Իրշադի» թղթակիցը Ատրպատականի ցաւալի դէպքերին տուել է մի հակասական կերպարանք, քիւրդերի չարարարքները քրիստոնեաներին վերագրելով։ Ամբողջ Ատրպատականի ազգաբնակութեանց, ինչպէս նաև ձերդ վսեմութեան յայտնի է, թէ քիւրդերը ինչ մեծ չարիքներ են հասցրել քրիստոնեաներին Ատրպատականի գաւառներում. ոչ միայն կողոպտել, տանջել ու աւերել են, այլ և կոտորել են բազմաթիւ հայեր ու ասորիներ։

«Արդ ձերդ վսեմափայլութիւնը թող նը-կատողութեան առնէ, թէ չարամիտ և խառնակիչ մարդիկ ինչ սաեր են յերիւրում և ի՛նչ տեսակ խռովութիւններ են ուզում յարուցանել։ Երկար տարիներից ի վեր հայ և թուրք ժողովուրդների միջև գոյութիւն է ունեցել համերաշխութիւն և սերտ բարեկամական յարաբերութիւն. այժմ խռովարարները ուզում են հակառակութեան սերմեր ցանելով թշնամութիւն գցել հայրենակից երկու եղբայր ազգութիւնների միջև, իրանց անձնական միտումների և շահերի դրդումով։

«Այս մասին էս, պետութեան յարատև գոյութեան համար աղօթարարս, «Իրշադ» լրագրի խմբագրի և նրա թղթակցի դէմ բողոքում եմ։ Ձերդ վսեմափայլութիւնը և պետութեան բոլոր բարձրատիճան պաշտօնեաները գիտեն և լաւատեղեակ են, որ Ատրպատականի պարսկահպատակ հայերից կամաւորները չը կան և չեն եղել։

«Ուստի խնդրում եմ ձերդ վսեմութիւնից, որ բարեհաճէք մի երկաթեղ հեռագրական հերքում շնորհել, ուղարկելու համար ներքին գործերի մինիստրութեան, որ լրագրում տպագրված տեղեկութիւնները հայերի մասին սուտ են և զուրկ ամեն հիմքից, որպէսզի մինիստրութիւնը խստիւ արգելէ այդպիսի ստայոց և խռովայոյզ զրպարտութիւնների տպագրվելը, որոնք կարող են հայրենակից երկու ազգերի միջև խռովութիւն սերմանել։ Վստահ ենք, որ այդ շնորհը չը պիտի զլանաք անելու։

«Առաջնորդական փոխան. Ատրպատականի «Կարապետ քահ. Մանուկեան»

Արդարև իմ Թաւրիզում գտնված օրից ինձ յայտնի է եղել, որ հայ ազգի կողմից ոչ մի ապօրինի ընթացք չի տեսնվել. և այդ տեսակ պախարակելի վերագրումների նշանն անգամ չի նկատվել. այս ժողովուրդը միշտ եղել է հաւատարիմ հպատակ, և պարսից պետութեան բարեհաճ տրամադրութիւնը դէպի հայերը յարգող և երախտագէտ, իսկ հայերի այդ յատկութիւնները ինքն ըստ ինքեան ջրում են վերոյիշեալ վերպարտութիւնները։

Եթէ մինիստրութիւնը յարմար կը գտնէ, թող առաջնորդական փոխանորդի հերքումը հրամայէ տպագրել տեղիդ լրագիրներում, որպէսզի երկու կողմերի միջև եղած մրաքերի յուզումը փարատվի, մտքերը խաղաղվեն և սուտ լուրերի հրապարակ հանելու անտեղութիւնը երեան գայ։

Նիզամ-իլ-Միւլք

* * *

Ամեն կասկածից վեր է, որ նահանգապետութեան այս հեռագիրը կուենեայ իր ցանկալի ազդեցութիւնը մայրաքաղաքի հայատեաց թերթերի վրա։ Հայկազուն

*) Ամենայն հայոց Կաթողիկոսը՝ ուշադրութեան առնելով Կարապետ քահանայի ժրաջուլ գործունէութիւնը, մի առանձին կոնդակով շնորհեց աւագ քահանայութեան աստիճան։ Հ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՍԱԿԱԳԻՆ

ԶԱՆԱԶԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ

(Մայիսից 4-ից մինչև 19-ը)

Կազմված Թիֆլիսի քաղ. դումայի տնտես. մասնաժողովի և հաստատված՝ Թիֆլիսի Նահանգապետի կողմից մայիսի 2-ին։

—

Հաց.—I տեսակի փուռն՝ ֆունտը 5½ կ., I տես. թոնրի՝ ֆ. 6 կ., II տես. փուռն և թոնրի 5 կ., III տես. փուռն և թոնրի 4½ կ., հաճարի հաց փուռն ֆ. 3 կ., լաւաշ I տեսակի թոնրի ֆ. 6 կ., լաւաշ II տես. թոնրի 5½ կ., բուլկի ֆրանս. ½ ֆունտանոց 5 կոպէկ։

Միս.—Սուկի առանց սակագնի, I տեսակի (ազդրը առանց արտալայի) սուկի մասը ֆունտը 18 կ., II տես. (չալաղաջ, ոչ, սապարավ, կոտլետային մաս) ֆ. 15 կ., III տես. (թիակը, անգալա, ուսը, նախաուս, արտալա, շլինքը մկաններով, 7 ողնաշարով և այլն) ֆ. 10 կ., ոչխարի ֆ. 17 կ., գոմէշի ֆ. 10 կ., խոզինը կաշիով ֆ. 14 կ., խոզինը առանց կաշու ֆ. 15 կ., դմակի ֆունտը 22 կ., խոզի ճարպ ադած ֆ. մինչև 30 կ., խոզի ճարպ հալեցրած ֆ. 28 կ.։

Կրուպա.—Պերլովի ֆ. մինչև 10 կ., մանեայա ֆ. մինչև 10 կ., գրեչն. ֆ. մինչև 9 կ., պշենո (կորեկ) ֆ. մինչև 6 կոպէկ։

Աղ.—Սեղանի ֆ. մինչև 2 կ., մաքրած (քսակներով) ֆ. մինչև 3 կ., Կողբի (քար) պուդը 70 կոպ.։

Բրինձ.—Աքսուայի ֆունտը մինչև 14 կ., սարազ. ֆ. մինչև 9 կ., մակարոն ֆ. 14 կ., վերմիշել ֆ. 14 ֆ., սիսեռ 6 կոպ.։

Ձէթ.—Արևածաղկի ֆ. մինչև 19 կ., շիրբաթի ֆ. մինչև 35 կ., խլօպկով. (բամբակաթրիվի) 15 կոպ.։

Բանջարեղէն և կանաչեղէն.—Դեղանախնձոր (կարտոֆ.) ֆ. մինչև 3 կ., բազուկ ֆ. մինչև 2½ կ., սոխ ֆ. 3 կ., սխտոր ֆ. 5 կ., գազար ֆ. 4 կոպ.։

Ձուկ.—Ձուտխի (առանց գլխի) ֆ. մինչև 30 կ., ղուտխի (գլխով) ֆ. մինչև 8 կ., թառափ (օսետրինա) «կաթնով» 30 կ., թառափ գլխամասով ֆ. մինչև 10 կ., շիղանաձուկ (սուդակ) ֆ. 17 կ., սաղան ֆ. 14 կ., կուտում ֆ. 14 կոպ.։

Շաքար.—Գլուխ ֆունտը 18 կ., կտրատած և սղոցած ֆ. 19 կ., շաքարաւազ ֆ. 16 կ.,

Մոմեր.—Եղեր. Կրեստովն. ֆ. մինչև 40 կ., ուրիշ գործարանների 37 կոպ.։

Լուցկի.—Լապչինայի և ուրիշ. 10 արկղիկը 25 կ., մէկ արկղիկը 3 կոպ.։

Կաթնային մթերքներ.—Հալած իւղի I տեսակի ֆունտը մինչև 55 կ., աղրաած իւղ (էքսպորտ.) ֆ. մինչև 52 կ., իւղ տաքացրածներով ֆ. մինչև 55 կ., I տեսակի կարագ իւղ Պարիզի ֆ. մինչև 68 կ., իւղ հում սերից ֆ. մինչև 64 կ., կաթի կրուժկան 5 կ., պանիր թուշի ֆ. մինչև 28 կ., ալօրոգ ֆ. մինչև 10 կ., թթաւասեր (սմետան) ֆ. մինչև 30 կ., ձու 10 հատը մինչև 25 կ.։

Ցորեն.—Պուդը մինչև 2 բուբլի։

Սիմինդր.—Պուդը 90 կ. մինչև 1 ր. 5 կ.։

Ալիւր (Բոստովի Ջրաղացն.)։ Ալիւր (Սօրոզովի) երեք 000 քսակներով, պլոմբով, պուդը 3 ր. 25 կ., 1 ֆունտը 9 կ., մաղացած հոլերը 5 պուդանոց քսակը 15 ր., 1 ֆ. 8 կ., I տեսակի ½5 պուդ. քսակը 14 ր. 10 կ., 1 ֆ. 7½ կ., II տես. 5 պ. քսակը 13 ր. 60 կ., III տես. 5 պ. քսակը 12 ր. 60 կ., IV տես. 5 պ. քս. 12 ր. 10 կ., V տես. 5 պ. քս. 11 ր. 85 կ., VI տես. 5 պ. քս. 11 ր. 35 կ., VII տես. 5 պ. քս. 10 ր. 10 կ., հաճարի ալիւրի պուդը մինչև 1 ր. 40 կոպէկ։

Ծանօթ. I.—Հիւս. Կովկասի Ջրաղացների ալիւրի բոլոր տեսակներն էլ իւրաքանչիւր 5 պուդանոց քսակի համար 45 կոպէկով աւելի արժեն Բոստովի ալիւրի դիմաց, բացառութեամբ Նեղլօբինսկ.-Կաշչենկոյի Ջրաղացի № 7 և 8 ալիւրի, որը գնահատվում է իւրաքանչիւր քսակի վրա 50 կ. աւելի։ Հիւս. Կովկ. Ջրաղացների գների դիմաց։

Կարտոֆիլի ալիւրի ֆունտը մինչև 15 կ.։

Ծանօթ. II.—Սարեն յիշված՝ Բոստովի Ջրաղացների ալիւրի տեսակների համար, որոնք գնված են Բոստովում այս տարվայ ապրիլի 16-ից յետոյ, երբ գները այդ տեսակների վրա աւելացված էին, թոյլատրվում է Թիֆլիսում այդ տեսակների իւրաքանչիւր 5 պուդ քսակի համար գները աւելացնել հետևեալ սահմաններում. I տես. 14 ր. 25 կ., (1 ֆ. 7½ կ.), II տես.՝ 13 ր. 75 կ., III տես.՝ 12 ր. 85 կ., IV տես.՝ 12 ր. 35 կ., V տես.՝ 12 ր. 10 կ., VI տես.՝ 11 ր. 60 կ., VII տես.՝ 10 ր. 35 կ., VIII տես.՝ 9 ր. 85 կոպէկ։

Կեր (ֆուրաժ).—Գարու պուդը մինչև 1 ր. 15 կ., խոտինը՝ մինչև 60 կ., զարմանինը՝ մինչև 50 կ., վարսակինը (овесъ) մինչև 1 ր. 10 կ., թեփինը՝ մինչև 1 ր., մեզի պուդը մինչև 1 ր. 35 կոպ.։

Ածուխներ.—Զոր ածուխ առանց խառնուրդի և աղբի՝ պահեստներում պուդը 55 կոպէկ։

Ծանօթ.—Սայլերով շրջեցվող ածուխը քսակներով պէտք է վաճառվի 20 ֆ. խորութիւն ունեցող չափով 35 կ., բեռներով ծախվող ածուխը, բացի կշիռով և չափով վաճառվելուց, կարող է փոխադարձ համաձայնութեամբ վաճառվել և առանց դրանց։

Դարբնոցի ածուխի պուդը 65 կ., քարածուխ Տկվիբուլի պ. 30 կ., անթրացիտ պ. 60 կ., կոքս պ. 65 կոպ.։

Փայտ.—Բոխի (գրաб.) տեղնուտեղը սաժ. 58 ր., չինարի տեղնուտեղը սաժ. 50 ր., խառը ամեն տեսակի տեղնուտեղը 54 ր., որ փայտ կշիռով պուդը մինչև 30 կոպ.։

Ծանօթ.—Փայտի պահեստ ունեցողները պարտաւոր են փայտը դարսել պահեստում կանոնաւոր և սեղմ կերպով առանց բացերի, ½, ¼ և ⅛ սաժէնամասերով։

Փայտը տուն ուղարկելու համար գնողը վճարում է համաձայն Թիֆլիսում մշտապէս գոյութիւն ունեցող և հաստատված սակագնի։

Խորանարդ սաժէն փայտ կրելու համար սակագին։

1) Երկաթուղու փայտի պահեստից և վագոններով մինչև մաքսատան մօտի պահեստները բերված ու երկաթուղու մօտերքը գտնվող պունկտերից 3 ր. 50 կ., 2) X և IX քաղաքամ. բայօնում մինչև Վօրոնց. արձանը 4 ր., 3) Սօլդասկ. Բազարի բայօնում 5 ր., 4) Երևան. հրապարակ 6 ր., 5) Բէբուտով. փող. 7 ր., 6) Սօլօլակի հեռաւոր մասերը 7 ր., 7) Գօլովինսկ. պրոսպ., Օլգինսկ. և մերձակայ մասերը 6 ր., 8) Հալաբար և Թիւրք. մէյդանի մասերը 8 ր., 9) Շան թաղը 8 ր., 10) Օրթաճալա 9 ր., 11) մինչև Զարգարեանի գործարանը 9 ր., 12) Պեսկի, Սամանայա հրապարակից ոչ հեռու 5 ր. 50 կ., 13) Նաթլուղ 10 ր., 14) մինչև ս. Դաւթի սարի սատրոնների վերջը 8 ր.։

Վերը յիշած երկու բայօնների պունկտերը տանելու վճարը որոշվում է աւելի հեռաւոր պունկտերի համար որոշվող նորմայի համաձայն. սաժէնի մի մաս փայտը տանելու գինը պակասեցվում է համաձայն փայտի քանակի. մաքսատան մօտերքի փայտի պահեստներից տարվող փայտը քաղաքի զանազան մասերը տանելու վճարը սաժէնի վրա 50 կ. պակաս է՝ երկաթուղային պահեստից նոյն մասերը տարվելու համար նշանակված գների դիմաց։

Բեռնակիր սայլերի.—(Վաւերաց. 1908 թ. մարտի 31-ին քաղ. դումայից և հաստատված Թիֆլիսի Նահանգապետի կողմից 1908 թ. օգոստ. 21-ին)։ Թիֆլիսի ապրանք. կայարանից՝ 1) Դիդուբէ, Նախալովկա և քաղաքամ. բայօնները, Վելիկօկնեաժ. և Աւչալա. փողոցների միջև մինչև Կերօչն. փող. իւրաքանչիւր պուդի համար 2 կ., 2) մինչև քաղաքի կենտր. մասերը՝ Երևան. հրապ., Արմեանակի և Սօլդատսկի բազար, Թուրքաց Մէյդան, Բազաղխանա (Темн. ряды), Գեսկի, Գօլովինսկ. պր., Օլգինսկայա մինչև Կերօչն., մի քանի տեղերում առանց կրելու (իսկ կրելը—բարձել և իջեցնել—համաձայնութեամբ) պուդը 3 կ., 3) Նաթլուղ կայարանից Հալաբար՝ պուդը 2 կ., մինչև քաղաքը 3 կ., 4) այս մասերից հեռաւոր լեռնային կողմերը, այն է՝ Հալաբար ս. Դաւթի սարի սատրոնը, Վօղնեսենսկ. փող., Օլգինսկ., Կերպիչն. փող. կողմերը և Օլգինսկի բարձրադիր մասերը՝ 4½ կ., 5) քաղաքի վերջին ծայրամասերը, ինչպէս են՝ Թայիրեանի և Զարգարեանի գործարանները, Օրթաճալա, Կրծանիս (քաղաքի սահմ.), Նաթլուղ, Սարաբիթալօ և Վակէ՝ 6 կոպ.։

Ծանօթ.—Փոստօրաւոր սայլերով տարվող բեռների համար քաղաքի բոլոր կէտերի համար ½ կ. աւելի արժէ։

Նաթեղէն.—Նաթլուղի և Վօկզալին մերձակայ պահեստներում, մեծ քանակութեամբ, տեղնուտեղը՝ տակառներով՝ պուդը 1 ր. 75 կ., պուդերով 1 ր. 80 կ., քաղաքների պահեստներին ուղարկելով պ. 1 ր. 80 կ., ֆունտերով՝ ֆունտը 5 կ., մանամաս՝ պուդը 1 ր. 90 կոպ.։

Ծանօթ.—Մանամաս ծախելիս պէտք է անպատճառ կշռելով ծախել և ոչ չափով։

Մազաս՝ առանց ուղարկելու՝ տեղը պ. 58 կ., ուղարկելու համար՝ պուդը 2—6 կ., նէթ, հում, առանց ուղարկելու, պուդը 58 կ., ուղարկելու համար՝ պ. 2—6 կ., Սուրբ-խանի ի սպիտակ՝ առանց ուղարկելու՝ պ. 1 ր. 45 կ., սև՝ առանց ուղարկելու՝ պ. 85 կ.։

Բէնզին.—Սեծաքանակ տեղնուտեղը, առանց ուղարկելու, I տեսակ (уд. вѣсъ 716—720) պուդը 6 ր. 50 կ., II տեսակ (уд. вѣсъ 735) 4 ր. 50 կ., III տես. (уд. вѣсъ 750) 3 ր. 30 կ., մանամաս վաճառելով՝ I տես. ֆունտը 18 կ., II տես. ֆ. 12 կ., III տես. ֆ. 9 կոպ.։

Ձէթ Ցիլինդրովի.—Շերբայեվի I տեսակի պուդը մինչև 5 ր. 30 կ., Շերբայեվի II տեսակի պ. մինչև 5 ր., մեքենայի իւղ մաքրած պ. 3 ր., չը մաքրած պ. 2 ր. 70 կ.։

Վաճառականների՝ ներկայ սակագնին հակառակ գնալու դէպքում բողոքելու և աշակցութիւն ստանալու համար պէտք է դիմել ոստիկանական պաշտօնեաներին կամ առևտրա-տնտեսական պալատի հերթապահ գործակալներին (ագենտներին), նոյնպէս և մթերքների վրա հսկող մասնաժողովի նոյն բայօնի անդամին կամ քաղաք. ուղղավարին (IV բաժանմունք)։

Մթերային մասնաժողովի անդամները քաղաքային դումայի ձայնաւորներն են, որոնք և հսկում են առևտրի ու շուկաների վրա։

I քաղաքամասում Գ. Ս. Վասիլով, II և III քաղ.՝ Գ. Ն. Գէլ և Մ. Ի. Մարտիրոսեան, IV և V քաղ.՝ Ա. Մ. Տէրտէրով, VI և VII քաղ.՝ Ս. Մ. Նունուփարով, VIII և IX քաղ.՝ Ծ. Ա. Մինեվ և X, XI և XII քաղ.՝ Ա. Գ. Կօբուլաշվիլի և Գ. Դ. Սօսին։

Առևտրա-տնտեսական վերակացուների և գրասենեակների հասցէները։

I Քաղաքամասում Վէբրայի հր. քաղ. տուն։ II—III քաղ.՝ Գրաֆսկայա, տ. Խուրշուտովի։ IV V քաղ.՝ Թուրքաց մէյդան։ VI—VII քաղ.՝ Հալաբար, Կոմսոմոլսկ. հր. տ. Նունուփարովի։ VIII—IX քաղ.՝ Ելիզավէտինսկ. № 10, տան Յարութիւնեանի։ X. XI—XII քաղ.՝ Զիբքէզովսկ. № 87 տ. Սարիեվի։

Քաղ. վարչ. անդամ Ջաբար

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Զուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բաղուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բաղուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Զուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Զօրանցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՐՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահաս.։
Մ. Մ. ԲԵՆԻԵՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկոր դի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿՈՐՊԵՏՅԱՆ—12—1 ժ. երեչ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահաս.։
ԳԻՆ.Բ.ԺԻԶԳ ՏԷՐ-ԳԱՐԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՑՈՒՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԵՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—81

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող., № 18 (Զօրանցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սեմեոնովսկայա, № 16.

(Չ. ու. Կ.) 1018. 100—66

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ԴԻՄՈՒՄՆ

Որդիս՝ ԱՇՈՏ ՄԵԼԻՔՍԷԹԵԱՆ, 13 տարեկան, գիմնազիստ, առողջ կազմուածքով, հագած ունի պարուսիէ ամարային ճերմակ բլուզ և սև գոյնի վարտիկ, տարին՝ չուսարիկներ, գլխին՝ աշակերտական գլխարկ, ամսիս 10-ին, առաւօտ. ժամը 10-ին տնից դուրս գալով՝ մինչև այժմ չէ վերադարձել տուն։ Սրանով խնդարհարար խնդրում եմ յիշեալի ուր լինելը իմացողներին բարի լինել յայտնել ինձ հետևեալ հասցէով՝ Թիֆլիս, Ելիզավէտինսկայա փող. № 128, Իվան Մելիքսէթեանին։

309. 2—2

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրբխանեանի . . . . . 30 կ.
2) ԿՕՆՅԻՈՒՑԻՈՍ (Զինական իրմատուցը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմից Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրբխանեանի . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
6) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, I պրակ, թարգմ. Ա. Մ., 30 կ.
7) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, II պրակ, թարգմ. Ա. Մ., 20 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
4. 0—7

Розыгрышъ билетовъ ВЫСОЧАЙШЕ разрѣшенной благотворительной лотереи 1914 года въ пользу раненыхъ и больныхъ воиновъ, семей лицъ, призванныхъ на войну, и лицъ, пострадавшихъ отъ военныхъ дѣйствій, будетъ производиться публично, въ Петроградѣ, въ помѣщеніи гимназіи Императора Александра I (Казанская ул., 27) Совѣтомъ Государственнаго Банка, въ присутствіи однаго изъ членовъ Комитета лотереи и депутатовъ отъ Петроградскихъ: дворянства, губернскаго земскаго собранія и городского общественнаго управленія.

Розыгрышъ билетовъ I-го выпуска (зеленыхъ) начнется I іюня с. г., а билетовъ 2-го выпуска (розовыхъ)—20-го іюня с. г.

Продажа билетовъ прекращается всюду 15-го Мая с. г., за исключеніемъ конторъ и отдѣленій Государственнаго Банка и казначействъ, гдѣ билеты обоихъ выпусковъ будутъ продаваться съ 15-го Мая по 27-е Мая с. г., включительно.

Цѣна билета—5 р., а одной пятой части билета—1 р.

Выигрыши—отъ 100,000 р. до 200 р.

Всего выигрышей 8,668 на сумму 3.000,000 р.

312. 2—2

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный